ՀՏԴ 929:947.925 Իշլեմեջյան

Doi:10.54503/0135-0536-2024.2-189

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՄԻՔԱՅԵԼ ԻՇԼԵՄԵՋՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ*

Հուշագիրը՝ Միքայել Իշլեմեջյանը, ծնվել է 1892 թ. մարտի 24-ին Կ. Պոլսի Գում-Գափու թաղամասում: Ավարտել է Պարտիզակի (Բութանիա) Ամերիկյան բարձրագույն ուսումնական հաստատությունը: 1910–1911 թթ. ուսանել է Կ. Պոլսի զինագործական ուսումնարանում, որն ավարտելուց հետո նրան շնորհվել է արագահարված զենքերի հարյուրապետի, իսկ բանակում ստացել է հազարապետի՝ կապիտանի կոչում[1]: Մասնակցել է ալբանական ապստամբության ճնշմանը (1911–1912 թթ.), իտալա-թուրքական (1911–1912 թթ.) և Բալկանյան առաջին պատերազմներին (1912–1913 թթ.), որի ժամանակ գերվել է հույների կողմից: Պատերազմի ավարտից հետո Մ. Իշլեմեջյանն ազատվել է գերությունից, չի վերադարձել Կ. Պոլիս, այլ հաստատվել է Բուլղարիայում՝ Վառնայում, որտեղ հարևանությամբ բնակվում էր նշանավոր հայդուկապետ Անդրանիկ Օզանյանը:

1914 թ. հուլիսի 19-ին սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, և Մ. Իշլեմեջյանը հարյուրավոր հայրենակիցների հետ որոշում է մեկնել Կովկաս և անդամագրվել կամավորական շարժմանը: Հոկտեմբերի 5-ին նավով գալիս է Օդեսա, որտեղ ոստիկանության կողմից ձերբակալվում և աքսորվում է Ուֆա, քանի որ չուներ անձը հաստատող փաստաթղթեր: 1916 թ. օգոստոսին ոստիկանությունից գաղտնի գալիս է Ռոստով՝ Նոր Նախիջևան, որտեղ տեղեկանում է կամավորական շարժման լուծարման մասին: Կեցությունն ապահովելու համար սկսում է զբաղվել առևտրով: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո տեղեկանալով նոր կազմակերպվող հայ ազգային զինուժի մասին՝ Մ. Իշլեմեջյանը դեկտեմբերին գալիս է Խնուս և ծառայության անցնում գնդապետ Սերոբ Սամարցյանի գնդում՝ որպես գումարտակի, ապա՝ Անդրանիկի զորամասում՝ որպես վաշտի հրամանատար:

1918 թ. մայիսի 15-ին՝ թուրքերի կողմից Ալեքսանդրապոլը գրավելուց հետո, զորամասը, մարտեր մղելով, հասնում է Դսեղ, որտեղ մնում է շուրջ 15 օր: Այստեղից զորամասն անցնում է Դիլիջան, ապա՝ Սևանի ավազան: Մ. Իշլեմեջյանը մասնակցում է Նախիջևանում, ապա՝ Հյուսիսային Պարսկաստանում թուրք-քրդական ուժերի դեմ մղված մարտերին: Պարտությունից հետո Անդրանիկը, չկարողանալով ապահովել զորամասին պարենով, ցրում է զորքը, որից հետո Մ. Իշլեմեջյանն իր վաշտով հասնում է Շուշի:

Համաշխարհային պատերազմի ավարտից հետո Մ. Իշլեմեջյանը վերադառնում է Կ. Պոլիս, ապա՝ մեկնում Կիլիկիա: 1920 թ. աշնանը 200 կամավոր-

---

** Ներկայացվել է 10. V. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:*

[1] ՀՀ բանակում՝ գլխապետ [տե՛ս «Ռազմիկ» (Երևան), 15. V. 1920]:

ների հետ մասնակցել է 1920 թ. թուրք-հայկական պատերազմին, որի մասին, սակայն, 1949 թ. գրած իր հուշերում մանրամասներ չի հաղորդում[2]:

1921 թ. փետրվարին մասնակցել է հակաբոլշևիկյան համաժողովրդական ապստամբությանը, որի պարտությունից հետո անցել է Պարսկաստան, ապա՝ Պաղեստին: 1923 թ. տեղափոխվել է Եգիպտոս, այդտեղից էլ՝ Հունաստան, 1925 թ.՝ Փարիզ: Կեցությունն ապահովելու համար կարել է պայուսակներ, միաժամանակ խաղացել է սիրողական թատրոնում: 1945 թ. նոյեմբերի 4-ին մասնակցել ու ճառ է արտասանել Պեր-Լաշեզ գերեզմանոցում Անդրանիկի արձանի բացման առթիվ[3]:

1947 թ. Մ. Իշլեմեջյանը ներգաղթել է Խորհրդային Հայաստան՝ Երևան[4]: Ընտանիքը բնակություն է հաստատել Կիլիկիա թաղամասում՝ կիսակառույց երկհարկանի տան երկրորդ հարկում: Այդ տան առաջին հարկում բնակվում էր Հունաստանից ներգաղթած Միքայել Բարթիկյանի ընտանիքը, որի որդի-ներից Հրաչը (1927–2011 թթ.) հետագայում դարձել է նշանավոր պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Մ. Իշլեմեջյանը մահացել է 1960 թ. մայիսի 28-ին, Երևանում[5]:

Առաջին անգամ հրապարակվող Մ. Իշլեմեջյանի հուշերը նոր տեղեկություններ են հաղորդում հայ ժողովրդի համար ճակատագրական 1914–1920 թթ. մասին, որոնցում կարևոր տեղեկություններ կան ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչներ Անդրանիկի, Սարգիս Ջեբեջյանի և այլոց վերաբերյալ: Դրանցում մանրամասն նկարագրված են Անդրանիկի զորամասի մղած կռիվները Նախիջևանում և Հյուսիսային Պարսկաստանում, իրավիճակն Արցախում, մասնավորապես՝ Շուշիում:

Մ. Իշլեմեջյանի հուշերը բաղկացած են 49 թերթից: Կրճատվել են անձնական բնույթի փաստերը, ուստի հրապարակվող փաստաթուղթը սկսվում է 27-րդ թերթից: Հուշերը հրապարակվում են բնագրին հարազատ՝ առանց ոճական ու լեզվական էական փոփոխությունների: Հուշագրի լեզուն խառն է՝ արևմտահայերեն ու արևելահայերեն: Բոլոր ընդգծումները փաստաթղթինն են: Ուղղահայաց փակագծերով կատարել ենք անհրաժեշտ հավելումները:

Փաստաթուղթը պահվում է Հայաստանի ազգային արխիվի «Փաստաթղթերի հավաքածու հայ ազատագրական շարժումների վերաբերյալ ֆոնդում (ֆ. 402):

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

---

[2] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 402, ց. 1, գ. 10, թ. 1 և շրջ.:*

[3] *«Ժողովուրդ» (Փարիզ), 08. XI. 1945:*

[4] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 10, թ. 22:*

[5] *Այս պարբերության մեջ շարադրված նյութը վերցրել ենք Մ. Իշլեմեջյանի որդու՝ Պեպո Իշլեմեջյանի հուշագրությունից [տե՛ս* https://issuu.com/factum-doc/docs/pepo_ishlemejian *(մուտք՝ 09. V. 2024)]:*

ԻՄ ՀՈՒՇԵՐԸ

12 օգոստոսի 1949 թ.
Երևան

«[1918 թ. հունիսի 4-ից] 2–3 օրից փաշան (Անդրանիկը – Ռ. Ս.) հրամայեց ամբողջ զորամասը հավաքել այնտեղ [Ծաղկունքի մոտ, գյուղ Գեղարքունիքի մարզում] գտնվող փոքրիկ դաշտում: Քառակուսի կազմեցինք և կազմ ու պատրաստ սպասեցինք Անդրանիկի գալստյանը: Քիչ անց իր անձնագոհ ձիավորներով, Սմբատի[6], Բոնապարտի[7] և այլ անձանց հետ եկավ ու քառակուսի մեջ տեղ կանգնած՝ «Բարև քաջա՛ց»,– պայմանական բարև տվավ, իսկ մենք էլ մեր կարգին «Բարև քաջի՛ն»,– գոռալով ողջունեցինք:

«Հանգիստ» հրամանից հետո սկսավ կարդալ Երևանից ստացված հրամանը և հաշտության պայմանագրի պատճեն[8]: Ի վերջո՝ «Ես այս դաշնագիրը չեմ ճանաչեր: Սա դաշնագիր չէ, այլ խայտառակություն: Ես իմ սուրը մերկացրել եմ համաձայնականների[9], նրանց հետ էլ պատյանը պիտի դնեմ: Ես վաղվանից անցնելու եմ Պարսկաստան՝ միանալու անգլիացիներին, ով ուզում է թող հետևի ինձ, իսկ ով չի ուզում՝ թող հեռանա»,– ասաց ու վերջացուց: Բոլորս միաձայնությամբ «Հուռա՛» [հնչեցրինք], «Փաշան ուր, մենք էլ այնտեղ»[10],– ասեցինք ու ցրվեցինք:

Հաջորդ օրը կապիտան Բորտի[11] հետ եկած սպաները հրաման ստացան, ըստ իրենց փափագին, հեռանալ զորամասից: Մի երկու օր հետո[12] ճամփա ելանք դեպի Նոր Բայազետ[13], Դարալագյազ[14], Ջուլֆա գծով Պարսկաստան:

---

[6] *Սմբատ Բորոյան (Մախլուտո, 1875–1956) – ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի, կամավորական շարժման մասնակից, ՀՅԴ անդամ:*

[7] *Հայկ Բոնապարտյան (1880–1955) – ազատագրական շարժման գործիչ, բժիշկ, Ա. Օգանյանի թարգմանիչը և համհարզը, կապիտան:*

[8] *Նկատի ունի 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի հաշտության պայմանագիրը:*

[9] *Նկատի ունի Անտանտի տերություններին:*

[10] *Ա-Դոն Անդրանիկի և զինակիցների նման որոշման պատճառը համարում է հետևյալը. «Տաճկահայը երբեք չէր կարող հավատալ տաճիկին, նրա ներկայությամբ տաճկահային ապահովություն չկար: Եվ ահա, այս ի նկատի ունենալով, Անդրանիկը, ծանոթանալով հաշտության պայմանների հետ, հունիսի 4-ին հրավիրեց իր զորախմբի զինվորական խորհուրդ և այդ խորհրդում էր որոշվեց թողնել Կովկասը և բռնել Բաղդադի ճանապարհը» (տե՛ս Ա–Դ ո. Հայության երկունքը, հրատ. պատ.՝ Վ. Ղազախեցյանը, Ռ. Գասպարյանը, Ռ. Սահակյանը, Հ. Սուքիասյանը, Երևան, 2019, էջ 488):*

[11] *Ռուս կապիտան Յակով Բորտը 210 նախկին հայ ռազմագերիների հետ 1918 թ. մարտի կեսերին եկել էր Իրկուտսկից Թիֆլիս և Անդրանիկի գնդի կազմում մեկնել ռազմաճակատ. այդ մասին մանրամասն տե՛ս* Поручик Алексей Колмаков. Историческая армянская рота / Сост. и подг. к изданию А. Закарян. Ереван, 2009, с. 5–6, 61–64. *Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 10, թ. 19 շրջ.:*

[12] *1918 թ. հունիսի 5-ին Անդրանիկի զորախումբը դուրս եկավ Դիլիջանից:*

[13] *Գավառ:*

[14] *Վայք:*

Ճանապարհին ոչ մի միջադեպ չպատահեց: 2 օրից հետո հասանք Նոր Բայազետ[15]: Մեր վաշտին վիճակվեց տեղավորվել Նորադուս գյուղում: Գիշերելե հետո մյուս առավոտ Սևանի ափը գնացի զբոսնելու, տեսա ձկնորսները ուռկան են գցել լիճը ձուկ որսալու համար: Մին էլ մի վառարան են դրել ծովեզերքը և վառում: Ուռկանը քաշեցին լիքը ձկներով և եզերքում դրված ամանների մեջ լցրին: Մի քանի հատ էլ թիթեղյա վառարանի վրա դնելով խորովեցին և այդ ձևով ինձ հյուրասիրեցին:

Նոր Բայազետից անցանք Դարալագյազ, այնտեղից էլ Նախիջևանի ճանապարհը բացեցինք: Դժբախտաբար, հիշողությունս ինձ դավաճանում է, այնպես որ ինչ գյուղերից անցկացանք, բոլորի անուններն էլ չեմ հիշում: Երբ Դարալագյազից ճամփա ելանք, հայ գյուղերից անցնում էինք, պատահեց, որ մի գյուղի մոտով էինք անցնում, տեսանք 2 ադրբեջանցի զինյալ երկու պահակ են կանգնել, քիչ այն կողմ էլ մի ծառի վրա մի հայտարարություն՝ Անդրանիկի ստորագրությամբ, որն արգելում էր այդ գյուղը մտնել կամ որևէ ձևով վնաս հասցնել: Այդ գյուղը գտնվում էր մի զառիվարի ձախ կողմը, և լայն ջուր էլ կողքից էր անցնում: Ահա այստեղ է Անդրանիկի մեծությունը: Իրեն դեմ գենք չվերցնող թշնամուն անգամ չի վնասել: Մինչդեռ թուրքերն իրենց հավատարիմ հպատակներն իսկ ջարդում էին: Այն ժամանակ առհասարակ ադրբեջանցիների մեծագույն մասը մուսավաթական[16] էին և թուրքերու (օսմանցի) բարեկամ ու գործակալ և ամեն կերպ ուզում էին վնասել հայերին: Եղած են դեպքեր, որ շրջակայքի ադրբեջանական գյուղերի մոտիկ հայ գյուղերը երկար ժամանակ պաշարվելով, սոված են թողուց, օրինակ, Ցղնա[17] գյուղն իր հարևան գյուղերով: Եվ երբ լուր կհաներ Անդրանիկին և օգնություն կուզվեր, նա կխոյանար տվյալ վայրը և կփրկեր իր հայրենակիցները: Տարակույս չկա, ներկայիս սով[ետական] կարգերի օրոք նրանք մոռացվեցին և պատմության անցան: Շնորհիվ սով[ետական] կարգերի և կոմ[ունիստական] պարտիայի խելացի քաղաքականության, այժմ բոլորս էլ եղբայրներ ենք[18]: Իցիվ[19], թե այն ժամանակվա ղեկավարներն էլ այս օրվա մեր ղեկավարների նման մտածեին, երեք հարևաններ իրարու հետ չթշնամանային: Հազար անեծք նրանց, որ պատճառ դարձան այնքան դառն եղած ողբերգությանց:

---

[15] *1918 թ. հունիսի 10-ին:*

[16] *«Մուսավաթ» կովկասյան թաթարների կուսակցությունը ստեղծվել է 1911 թ. Բաքվում: Եղել է Ադրբեջանի ժողովրդական Հանրապետության հիմնադիր և ղեկավար կուսակցությունը:*

[17] *Գյուղ Նախիջևանի Գողթան գավառում. ՀՅԴ հիմնադիրներից՝ Ռոստոմի (Ստեփան Զորյանի) ծննդավայրը:*

[18] *Ինքնին հասկանալի է, որ հեղինակի նման մեկնաբանությունը չի համապատասխանում իրականությանը. 1980-ական, 1990-ական թվականներին և 2016 ու 2020 թթ. դեպքերը և իրադարձությունները հակառակն են ապացուցում:*

[19] *Ուր էր, թե, թերևս:*



Մ. Իշլեմեջյանի ձեռագրից:

Վերջապես հասանք Նախիջևան: Այստեղ անթել հեռագրի կայանը գործում էր: Այստեղից Անդրանիկը կապվեցավ[20] Բաքու՝ Ստեփան Շահումյանի[21], Մոսկվա՝ Լենինի հետ: Ճանաչելով սով[ետական] կարգերը՝ իր հպատակությունը հայտնեց: Շահումյանից էլ օգնություն խնդրեց, որը խոստացվեց[22]: Այնտեղից անցանք ռուսական Ջուլֆա[23]: Այստեղ, բացօդյա անապատանման դաշտում բանակեցինք: Գնացինք, մաքսատունը գրավեցինք, ուր մեծ քանակությամբ նուշի մեջ[24] և չամիչ կար: Եվ որովհետև այս կողմերն անապատ էր, ուտեստեղենից նեղվեցինք: Մեր գրաված նուշն ու չամիչը որպես ուտեստ բաժանեցինք զինվորներին[25]: Ռուսական և պարսկական Ջուղաներն իրարից բաժանվում են Արաքս գետով և իրար են միանում Երևան–Թավրիզ երկաթգծի կամուրջով:

Երբ այստեղ հասանք, հետախույզներ հանեցինք ձիավորներից մեր շուրջը խուզարկելու համար: Հետախույզները լուր բերին, որ կամուրջին մյուս կողմը կասկածելի շարժումներ էին նկատել: Անդրանիկը Ջեբեջյանը Սարգսին[26], որը ձիավորների սկադրոնի[27] [հրամանատարն էր], հրամայում է և բանակին մեջ քաջ ու խիզախ անուն ուներ, ընիկ կեսարացի լինելով, շատ լավ գավառացի Թրքի նման Թրքերեն էր խոսում, կարգադրեց ամեն կերպ աշխատել կամրջի մյուս կողմը գրավել և մեր անցքը ապահովել: Սարգիսը վերցնելով իր հարյուրյակը կայծակի արագությամբ սլացավ դեպի կամուրջը: Մեր զինվորները փափախ էին դնում, երբ կամրջի վերջավորության կհասնին՝ «մերհաբա արքադաշլար» («ողջույն ընկերներ») ասելով հարյուրյակն անցկացնելով իսկույն շրջապատում է եղած պահակախումբն ու զինաթափում է: Թուրքական պահակախումբը մերոնց փափախներից և «մերհաբա արքադաշլարից» խաբվում և կարծում են, որ Թուրք զինվորներ են ու զենքի չեն դիմում: Երբ արդեն գերվում են, այն ժամանակ հասկանում են իրենց խաբվելը, սակայն ուշ էր այլևս:

---

[20] *Անդրանիկը Ս. Շահումյանին հեռագրել է 1918 թ. հուլիսի 14-ին (տե՛ս Հ. Ռ. Սիմոնյան. Անդրանիկի ժամանակը. երկու գրքով, գիրք Բ, 1996, Երևան, էջ 292):*

[21] *Ստեփան Շահումյան (1878–1918) – քաղաքական, պետական գործիչ, լրագրող, գրաքննադատ, Կովկասյան գործերի արտակարգ կոմիսար, Բաքվի կոմունայի նախագահ, բոլշևիկյան կուսակցության անդամ:*

[22] *Հեռագրի տեքստը և պատասխանը տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն). փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, Երևան, 2000, էջ 51:*

[23] *Քաղաք Նախիջևանի նահանգում՝ Արաքսի ձախ ափին:*

[24] *Միջուկ:*

[25] *Զորքի ընդհանուր թիվը՝ 3 հազար հետևակ, 700 հեծյալ, 150 հրետանավոր և 80 գնդացրորդ: Գաղթականների թիվը շուրջ 10 հազար էր (տե՛ս Ա–Դ ո, Հայության երկունքը, էջ 490):*

[26] *Սարգիս Ջեբեջյան (Սարգիս Ճէպէճի, 1864/79–1920) – ազգային-ազատագրական շարժման գործիչ, կամավորական շարժման մասնակից, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության անդամ: 1918 թ. մասնակցել է Կարինի պաշտպանությանը: Անդրանիկի զորամասի հեծելավաշտի հրամանատար: Մասնակցել է Անդրանիկի՝ Հյուսիսային Պարսկաստանում Թուրքերի դեմ մղած մարտերին: Հաճընի ինքնապաշտպանության կազմակերպիչներից և պաշտպանության ղեկավար (1920 թ.):*

[27] *Ռուս.՝* эскадрон, *հայ.՝ հեծելավաշտ:*

Այդ կետը գրավելով պահակություն է սահմանում և իսկույն սուրհանդակ է ուղարկում փաշային եղելությունը զեկուցելու համար: Առաջին բաթալյոնը[28] հրաման ստացավ կամուրջի մյուս կողմը՝ Ջեբեջյանի կողմն անցնել[29]:

Պարսկական Ջուղան կամրջից հեռու լինելով՝ բանակեցինք բաց դաշտում: Նուշն ու չամիչը կերանք ու ծարավեցինք: Անապատին մեջ ջուր չկար, բացի Արաքսի պղտոր ջրից, որը ստիպվեցինք խմել: Հաջորդ օրը զորամասը ճամփա ելավ դեպի Խոյ: Անդրանիկը ձիավորներով առաջից էր գնում, իսկ իմ վաշտը հերթապահ էր նշանակված:

Ամբողջ ճանապարհն անցնում է անապատի միջով: Գրեթե բնավ բնակչություն չկա: Առաջանում ենք շոսի[30] վրայով, որը ռուսներն են շինել իրենց ազդեցության գոտին եղած ժամանակ[31]: Շոսեի երկայնքով հազիվ 5–10 հատ նեղ հորեր կային, որոնց ջրերն էլ աղի էին: Ջուղայից Պարսկաստան անցնելուց առաջ մշեցի մեծ թվով գաղթականներ մեզ հետևում էին: Անդրանիկն ինչքան որ հորդորեց ետ դառնալ և մեզ չհետևել, սակայն օգուտ չարեց, իրենց որոշումից հետ չկարողացանք կանգնեցնել: Միաբերան ասում էին. «Փաշա՛, դուն ուր, մենք այնտեղ: Ապրենք միասին, մեռնենք միասին»: Տեսնելով, որ կարելի չպիտի լինի սրանց խոսք հասկացնել, [Անդրանիկը] թողեց, անցավ, գնաց:

Ջուլֆայից մինչև Խոյ մոտավորապես 90 կիլոմետր էր: Առաջին իրիկունը գիշերեցինք անապատում՝ բացօդյա: Առավոտ կանուխ էլի ճամփա ընկանք: Հունիս ամիսն էր, կիզիչ արևը վերևից, ծարավը ներքևից իրար նեղում էին մեզ, իսկ ջրերը զզվանքով խմում էինք: Երեկոյան մութը կոխելուց հետո էր բավական տեղ առաջանալուց հետո, երբ տեսա, որ տղոց ոտները էլ չեն ուզում հնազանդվել նրանց տերերի կամքին, ճամփի եզրին գտնվող մի ծառաստան մտցրի ու հանգստացրի: Մենք արդեն գտնվում էինք պատմական Ավարայրի դաշտում:

Առավոտյան վաղ զարթնեցի թնդանոթների ձայներից և տղերքը շտապ պատրաստեցի ու քայլեցինք առաջ միանալու համար զորամասին[32]: Խոյ քաղաքի մոտերքում շոսի ճանապարհի վրա հանդիպեցի Անդրանիկի, Բոնապարտյանի հետ, որ կարգադրեց ինձ ձախ թևի բարձունքներում երևացող Մամիկոնյան Վարդանի մատուռ-դամբարանի ստորոտը առաջանալ և թույլ չտալ թշնամուն ամեն գնով առաջանալ ու մնալ դիրքերում մինչև վերջին փամփուշտը, մեռնել, բայց չթողնել դիրքերը ու քշեց ձին և հեռացավ:

---

[28] *Ռուս.՝* батальон, *հայ.՝ գումարտակ:*

[29] *1918 թ. հունիսի 22-ին:*

[30] *Խճուղով:*

[31] *Անգլա-ռուսական համաձայնագրով (1907 թ.)՝ Պարսկաստանը բաժանվում էր ազդեցության երեք գոտիների: Հյուսիսն անցնում էր ռուսներին (հարավային սահմանը համարվում էր՝ Կասրե–Շիրին–Սպահան–Եզդ–Ջուլֆեգար գիծը), հարավը՝ անգլիացիներին (Բենդեր–Աբաս– Քերման–Բիրջենդ–Գեզիկ գիծը), իսկ երկրի կենտրոնական մասը համարվում էր չեզոք:*

[32] *1918 թ. հունիսի 23-ին տեղի է ունենում թշնամու հետ առաջին բախումը: Թուրքերը փախչում են՝ ռազմաղաշտում թողնելով 2 թնդանոթ, 3 գնդացիր, 300-ից ավելի սպանված (տե՛ս Ա–Դ ռ. Հայության երկունքը, էջ 493):*

Առջևում բրնձի արտեր էին ջրով ողողված, մեծ դժվարությամբ բավականին առաջացանք մինչև հարմար, թմբերով մի լավ դիրք հանդիպեցինք, որ[տեղ] իսկույն դիրքավորվեցինք: Աջ ու ձախ կողմերն մի քանի կիլոմետրի վրա հետախույզներ հանեցի՝ իմանալու, թե ինչ մասերու հարևան եմ: Դժբախտաբար, մարդ չկար, միակ վաշտն իմն էր: Թշնամին ամրացել էր բլրի լանջին և անընդհատ գնդակոծում էր գնդացրով: Իսկ մենք երբեմն պատասխանում էինք հատ-հատ: Մի 2–3 թեթև վիրավորներ ունեցա, որոնց, փոխադրական միջոց չունենալով, ստիպվեցա իմ հեծնելու ձիով թիկունք ուղարկել և փամփուշտ պահանջել, որովհետև չորս կողմից պահանջում էին: Մի քանի այդպիսի սուրհանդակներ ուղարկեցի, սակայն ոչ մինը հետ չեկավ: Գնացողը չվերադարձավ: Շարքերում տրտունջ սկսավ բարձրանալ, թե փամփուշտները հատնելու մոտ են: Կարգադրում էի խնայողաբար գործածել, անհարկի գնդակ չարձակել: Մեկ-մեկ տեսնում էի նահանջի փորձեր, իսկույն տասնոցով («Մաուզեր» ատրճանակ) քաշած թռչում էի նրանց մոտ ու հետ պահում այդպիսի վտանգավոր գործողությունից:

Երեկոյան ժամը 5-ի միջոցներին տեսա, որ աջ կողմից ձիավորներ են գալիս աջ թևը, դեպի աջ դարձրի [ուղղեցի աջ], որ նրանց առաջխաղացումը արգելեմ: Իմ այդ զբաղված պահուն ձախ թևից սկսել են նահանջել: Մեկ էլ տեսնեմ մարդ չի մնացել: Մի քանի հոգով եկող ձիավորների առաջխաղացումը կանգնեցնելուց հետո, մենք էլ կանոնավոր կերպով սկսանք նահանջել մինչև շոսը, ուր բացի մեզանից ոչ մի մարդ չէր մնացել:

Մինչև այստեղ հասնելը, բոլոր ճանապարհը անցել էինք բրնձի ջրով ողողված արտերի միջով և որովհետև եղանակը շոգ էր, մույկերս (երկարավիզ կոշիկ) չէի հագել, այլ բաղինկաներս, որով ոտքերս ամբողջությամբ ջրերի մեջ մխրճվելով, ջրասույզ եղող նավի նման մինչև բերանները ջրով էին լցված և դժվարացնում էին քայլելը:

Ճանապարհի երկայնքով բավականին առաջանալուց հետո եկանք, հասանք Սեյիդավար գյուղը: Գյուղն անմարդաբնակ էր, բոլոր բնակիչները փախել էին[33]: Գյուղի կողքին հանդիպեցի Ջերեջյան Սարգիսին, որը մի քանի ձիավորներով նստել էր հանգստանալու: Ինձ տեսնելով կանչեց քովը, որ մենք էլ հանգստանանք: Մոտեցա ու նստա կողքին:

«Սարգի՛ս, որ կողմն են մերոնք»,– հարցրի: Ասավ, որ «Բոլորն էլ Ջուլֆա են նահանջել: Քեզանից ու ինձանից բացի մարդ չէ մնացած: Ոչինչ, արի ծխախոտ մը փաթաթե», և ծխախոտատուփը երկարեց, որ չմերժեցի և մի սիկարեթ փաթաթելով սկսանք ծխել[34]:

---

[33] *Գյուղի, ինչպես նաև Խոյի և գավառի հայությունը գրեթե ամբողջությամբ կոտորվել էր տեղի մահմեդականների կողմից: Սեյիդավարում ողջ էին մնացել ընդամենը 14 հոգի (տե՛ս Ա–Դ ո. Հայության երկունքը, էջ 493, Հ. Ռ. Սիմոնյան. նշվ. աշխ., գիրք Բ, էջ 225):*

[34] *Հունիսի 24-ին Անդրանիկը՝ վերսկսելով առաջխաղացումը, փրկեց Վասպուրականից նահանջող և թշնամու դեմ օրհասական կռիվ մղող հայ-ասորական ուժերին ու գաղթականներին: Թուրքական 11-րդ դիվիզիայի հրամանատար Ալի Իհսան փաշան ստիպված էր դադարեցնել հետապնդումը և ողջ ուժերն ուղղել Անդրանիկի դեմ (տե՛ս Ա–Դ ո, Հայության երկունքը, էջ 504–505, Հ. Ռ. Սիմոնյան. նշվ. աշխ., էջ 221):*

Մերոնք Խոյ մտել են, բայց ձիավորները բլուրների բարձրունքները գրավելն ուշացրել են: Թուրքական Ալի Իհսանի[35] բանակը, որ Թավրիզից գնալու ճանապարհին է եղել, երեկվանվից պարտված թուրք փախստական զինվորներից լսելով, որ հայերը Խոյի կողմերն են, բանակը դառնցուցեր է մեր կողմը և մեզանից շուտ գրավել բարձրունքները: Կռիվը եղել է սոսկալի, սակայն մերոնց մի երկու հարյուրյակ ստիպված լինելով նահանջել՝ պատճառ են դարձել մյուսներուն ընկրկել: Այս կռվուն մեջ Սմբատի ձին զոհվում է, մնում է առանց ձիու, մի մշեցի ձիավոր Պողոս անունով իր ձին կտա Սմբատին, ինքն ալ գավակում՝ երկուսով կփրկվեն: Այս մասին իմ կինս էլ վկայում է: Կինս, որ Անդրանիկի անձնապահ հարյուրյակի հրամանատար Թուքայան Արամի քույրն է, եղել է Ալի Իհսան փաշայի բանակում հիվանդապահուի [գթության քույր], այդ անցքերում միջոցին ներկա և ականատես: Պատմում է, թե իրենք միշտ թիկունքում են եղել, այդ կռվի ընթացքին մի քանի անգամ նահանջի հրաման են ստացել, պատրաստվել են նահանջել, մի նոր հրաման՝ մնալ և այլն: Սա նշանակում է, որ եղել է ժամանակ, որ հայերու հարձակմանը չեն կարողացել դիմանալ և նահանջի պատրաստվելու հրաման են տվել, իսկ որ հաջողության անիվը դեպի իրենց է դարձել՝ մնալու հրաման են տվել:

Ինչպես հետո իմացանք[36], մերոնք թրքական գիծը կարող են եղել կտրել, անցնել, հակառակ թշնամու գերազանց թվին համեմատած մեր փոքր թվին: Սակայն գաղթականության կյանքն ապահովելու գնով ստիպվել է զորամասը նորից Ջուլֆա դարձնել[37]:

Այսպես հանգիստ խոսում էինք ու ծխում, մեկ էլ մի ձիավոր եկավ շոսի կողմը, ձիուց իջնելուց վրա էր, երբ մեկ էլ նկատեցի, որ նեգր է (սև ցեղ), իսկույն «Մաուզերս» քաշեցի ու վազեցի վրան՝ «Դավրանմա՛» («Չշարժվե՛ս»), «Դեսլի՛մ» («Հանձնվի՛ր») ըսելով: Մարդն անակնկալի եկած «Դեսլիմ», այսինքն՝ հանձնվում եմ, միայն թե մի սպանեք ինձ ասելով խնդրեց: Ես էլ ասացի, որ մենք թուրքեր չենք, մենք անգեն կամ հանձնվող մարդուն չենք սպաներ: Վրայից գենքերն առինք, գլուխը խուզարկեցինք, մի գուցե որևէ դոկումենտ գտնելու հույսով, բայց բան չկար:

Ջեբեջյան Սարգսի մի զինվորի ձին դաղրել էր, խնդրեց, որ ձին իրեն տամ, հակառակ, որ ես էլ անձի էի, տվի և գերին էլ իմ տղոցս հսկողությանը հանձնելով սկանք համրաքայլ[38], երբ մոտեցանք ջրին, որ շոսը կտրում էր, նրա մյուս երկու կողմը երկու բլուրներ կային և նրանց մեջտեղում մի կիրճի նման մի անցք, որ շոսն էր անցնում: Բլրի բարձրության վրա սև կետեր նկատեցի և Սարգիսի թևից բռնելով, որովհետև ոտքով էր, ձին էլ սանձից բռնած հետևիցս

---

[35] *Ալի Իհսան Սաբիս (1882–1957) – օսմանյան և թուրքական ռազմական գործիչ, Հայոց ցեղասպանության մասնակից, պատերազմական հանցագործ:*

[36] *Գերիներից Անդրանիկը տեղեկանում է, որ, բացի թուրքական 36-րդ դիվիզիայից, Խոյի և Սալմաստի շրջաններ են հասել 11-րդ դիվիզիայի զորամասերը (տե՛ս Հ. Ռ. Սիմոնյան. նշվ. աշխ., էջ 226):*

[37] *1918 թ. հունիսի 24-ին Խոյ քաղաքի և Վարդանի բլուրի շուրջը տեղի է ունենում ճակատամարտ, որտեղ հայկական կողմը պարտություն է կրում: Անդրանիկը և բազմահազար գաղթականությունը ստիպված են լինում նահանջել ռուսական Ջուլֆա, ուր հասնում են հունիսի 25-ի առավոտյան:*

[38] *Լուռ՝ անխոս քայլելով:*

էր քարշ գալիս: «Սպասի՛ր, սա կետեր եմ տեսնում բարձունքի վրա»,– ասացի, «Թո՛ղ մի երկու ձեռք կրակենք, եթե պատասխանեն՝ նշանակում է ճանապարհը փակված է, իզուր տեղը ծուղակը չընկնենք»: Համաձայնեց և երկու ձեռք կրակեցին [տրվում է երկու համազարկ], որ իսկույն պատասխանեցին: «Ես անցնելու եմ ինչ գնով էլ լինի»,– ասաց [Ս. Ջերեջյանը], հեծավ իր ձին, իր տղոց հետ հետ թռչունի նման թռավ: Իսկ ես ձախ ջրի ուղղությամբ բլուրը շրջանցեցի ու քարերի արանքով պահվելով կամաց-կամաց առաջացա: Բայց տեսնելով, որ կոշիկներս ինձ նեղում են, հանեցի և այնտեղ թողեցի: Ձախ կողմից սկսեցին կրակել [մեզ] վրա, թեև ոչ մի վնաս չկրեցինք: Մի քիչ մնալե հետո [որոշ ժամանակ անց]. «Տղերք պատրաստ եղեք վազելով այս միջոցը պիտի անցնենք»,– ըսի ու հրաման տվի վազքով առաջ շարժվել: Մի ակնթարթում մենք արդեն միջոցը կտրած էինք և ազատություններս գտած ենք:

Մի քիչ այն կողմ մի փոքր բացատ էր, երբ հասանք հատուկենտ զինվորներ կային՝ նրանց միացանք: Մեկ էլ ոնց եղավ, չեմ իմանում, ասվեցավ [հայտնեցին], որ փաշան Դաշտում[39] պաշարված կռվում է: Իսկույն տղերքը հավաքեցի, թվով մի 50 հոգի դասավորեցի, որ օգնության գնանք փաշային, մեկ էլ տեսնեմ Ջուլֆայի կողմից մի ձիավոր եկավ ու ազդարարեց բոլորին՝ Ջուլֆա գնալ: Երբ ասեցինք, թե փաշան պաշարված կռվում է դեռևս, «Ջուլֆա հասած կլինի հիմա: Ես նրա հրամանն եմ հաղորդում»,– ասաց ու քառամբակ հեռացավ: Մենք էլ հետևեցինք իրան: Գիշերվա 10-ն անց էր, երբ հասանք մի շինություն, ուր մեր զինվորներից մի մասն էր իջևաններ: Տեսնելով, որ մեր ոտքերը դավաճանում են մեզ, որոշեցինք մի փոքր հանգստանալ: Հոգնածություններս մեզ ուղարկել էր Մարբեռսի[40] գիրկը, թեև պահակներ ունեինք: Կեսգիշերն անց էր, մեկ էլ հեռվից հրացանաձգության ձայներ առինք, մութ գիշեր էր, լույս էլ չունեինք: Զինվորներն էլ զանազան մասերից, խուճապի մատնված փախուստի ճամփան բռնեցին: Ես էլ ստիպված հետևեցի, կարծելով, որ թշնամին մեզ հետապնդել և անակնկալ հարձակվում է: 5–10 րոպե հետո հրացանաձգությունը դադարեց և մենք հասկացանք մեր խաբված լինելը: Տեղացի պարսիկներն ուզենալով մեզ վախեցնել, փախցնել և մեր թողած ավարին[41] տիրանալ և մասամբ հաջողած էին: Մեզ փախցրին, սակայն ավարին չկարողացան տիրանալ, քանի որ բան չունեինք:

Նույն իրիկունը հասանք Ջուլֆա: Իմ հասած պահուն տագնապի ազդանշան տրվեց (տրիվոգ): Անմիջապես փաշային տեղն իմացա, որ փոքր մի բարձրության էր և գնացի, որ անելիքիս մասին հրահանգներ ստանամ: Ինձ տեսնելուն պես՝ «Շու՛տ վաշտիդ գլուխը, դիրք բռնե՛»,– ասաց: Ես էլ եկա վաշտս որոնելու, մինչ այդ հայտնի եղավ, որ Արմեն Սասունին, տխրահռչակ Կարո Սասունիի[42] եղբայրը, սասունցի գաղթականության գլուխն, մի փոքր զինված ուժերով, Նախիջևանի կողմից գալիս է մեզ միանալու:

---

[39] Գյուղ Նախիջևանում:

[40] Հին հունական ավանդազրույցում Մորփեոսը (հին հունարեն՝ ստեղծող, նա, ով ստեղծում է երազներ) քնի տիրակալ Հիպնոսի որդին էր՝ երազների աստվածը:

[41] Գույքին:

[42] Կարո Սասունի (1889–1977) – հասարակական, քաղաքական և պետական գործիչ, իրավաբան, պատմաբան, ՀՅԴ անդամ:

Ես իմ վաշտը գտա ու հավաքեցի, ինչպես և սպասավորս՝ Յանկոն, որն իմ փոխադրականս տվել է վիրավոր փոխադրելու, իսկ խուրջինս անհայտ կորել է, որուն վրա էր բոլոր հույսս: Նրա մեջ ունեի մի զույգ նոր կոշիկ, որը հուսով էի թողած տեղումս պիտի հագնեի: Ձիս էլ գտա: Այդ գիշեր բոցօթյա հանգստացանք: Մյուս օրը փաշան վերցրեց զորամասը և ուղղություն վերցրեց դեպի Գողթան գավառ, թողնելով ինձ իմ վաշտի հետ երկաթգծի կամուրջն օդ հանելու[43] համար[44]:

Մեր մեջ գտնվում էին քարտաշներ և մոտակայքում դինամիտի[45] մի պահեստ [կար]: Նրանց մեկնելուց հետո սկսանք հիմքերու ներքև խոռոչներ բանալ: Երբ այդ գործը լրացուցինք, բերինք դինամիտը, դրինք ու պատրույգելով հեռացանք ու կրակ տվինք: Պայթյունը ահռելի էր, սակայն կամուրջը տեղից չշարժվեց: Որովհետև կամուրջը առկախյալ լինելով՝ պետք է եղել կորության գագաթից քանդել: Մինչ այդ փաշայի կողմից մի սուրհանդակ եկավ: Փաշան կարգադրում էր վաշտով թողնել կամուրջը և միանալ զորամասին: Անմիջապես ուղևորվեցինք զորամաս: Ճանապարհին տեսանք մեր տղոցից, որոնք պառկած, կարծես քնել էին: Այդպես կարծելով մոտեցանք, որ ձայն տանք և մեզ հետ տանենք: Բայց տեսնելով, որ մահացել են, թողեցինք, անցանք: Եվ այսպես քանի քանիսը:

Մութը կոխելու վրա էր՝ մեր դեմ մի կիրճ ելավ: Անցնելով այն կողմը, տափարակի վրա, մեր աջ կողմը ու Արաքսի ափին մի գյուղ տեսնվեց: Ձիավորը փաշայի անունով մեզ արգելեց այն կողմ գնալ: Դեպի ձախ առաջացանք և հասանք մի գյուղի պարտեզների: Օրը շատուց մթնել էր և տղերքն էլ սոված ու հոգնած: Մտանք մի այգի և այդտեղ գիշերեցինք: Այդ այգու ծառերը ծիրանենիներ էին, պտուղները դեռ խակ: Մեր տղերքը վրա եկան և ուժգնությամբ սկսին քաղել ու ուտել: Շատ աշխատեցի մինչև կարողացա ետ կեցնել:

Մեր վերջին անգամ Ջուլֆա գալներուս, որովհետև կոշիկ չունեի, պարսկական Ջուլֆայից մի զույգ տրեխ էի գնել, հանեցի և ջուրը դրի, որ կակղի ու պառկեցինք, քնեցինք: Առավոտ զարթնելով մտանք գյուղ, տեսանք պատերի տակ ընկած դիակներ, ճիշտ այնպես, ինչպես նախորդ օրը տեսել էինք ճանապարհին: Անցնելով այդ գյուղը՝ գնացինք մյուս գյուղը, ուր իջևանած էր Անդրանիկը: Երբ որ ինձ տեսավ՝ «Շուտ վաշտդ գյուղից դուրս հանե»,— կարգադրեց: Ես տարա գյուղից դուրս՝ մեծ այգու մեջ տեղավորեցի: Այգիի միջով մի առու էր անցնում, ես գնացի այնտեղ առուի մոտ մի տեղ բռնեցի: Հաց չկար, քաղցած էինք, ինչո՞ւ, երբ գյուղի մեջ ես, եթե ոչ ձրի, գեթ փողով մի կտոր հաց կարող եմ ճարել, բայց չկար, որովհետև գյուղացիք էլ էին սոված: Պատճառը՝ երեկվա այն գյուղը, որ տեսանք, ադրբեջանական շատ մեծ գյուղ էր: Իր շրջակայքի հայ գյուղերը պաշարած, թույլ չէր տալիս, որ գյուղացիք դուրս գան վար ու ցան անեն: Հայ գյուղերը փոքր լինելուն հազիվ կարողացել են ինքնապաշտպանությամբ իրենց կյանքը պահպանել և ինչ-որ ունեցել են անմիջապես կերել, պրծել են: Այդ Յայջի գյուղը, ինչպես ասեցի, մեծ գյուղ էր, ուժեղորեն զինված, շրջակայքի ահ ու սարսափը:

[43] *Պայթեցնելու:*
[44] *Հունիսի 25-ին. տե՛ս Հ. Ռ. Սիմոնյան. նշվ. աշխ., էջ 238:*
[45] *Ուժանակ:*

Անդրանիկը, որ խաղաղ նպատակով գալիս [էր] Գողթան մի ապահով անկյուն գտնելու[46], երբ տեսնում է, որ Յայջի գյուղը ճանապարհը փակել և թույլ չի տալիս անցնել, պատգամավոր է ուղարկում՝ պահանջելով ճանապարհը բաց անել, խոստանալով՝ ոչ մի վնաս չհասցնել իրանց: Յայջի գյուղը նույնիսկ պատգամավորներին չի ընդունում և հակառակ սպիտակ դրոշ էլ ունենալուն՝ կրակում է նրանց վրա: Հիմի ձեզ եմ հարց տալիս, ով ապագա ընթերցողք, եթե դուք լինեիք Անդրանիկի տեղը, ի՞նչ կանեիք: Եվ ինչ որ արավ դուք ի՞նչ կանեիք: Եվ ինչ որ արավ դուք չէի՞ք աներ կամ կարող եք ասել, թե վա՞տ արեց: Ես ոչ մի բան չեմ ասեր, այլ թողնում եմ ձեր դատաստանին:

Երբ պատգամավորների վրա կրակում են, այս վերջինները հետ են դառնում և մի անմիջական[47] հարձակումով այդքան ամուր կիրճը գրավում ու առաջանում գյուղի վրա: Այնտեղ կային և՛ թնդանոթ, և՛ գնդացիր, և՛ օսմանյան թուրք սպաներ[48], որոնք պաշտպանում էին: Այստեղ կռիվը տեղի է ունեցել բաց դաշտի վրա: Եվ շուտով, քիչ ժամանակ, բայց համառ պաշտպանություն մը հետո յայջեցիք դիրքերը թողնելով կփախչեն: Մերոնք հալածում են և բոլոր զինված մարդկանց ջարդում, իսկ մյուսները գնացեր են դեպի Արաքս ու ջուրը նետվել, ոմանք ազատվել են, ոմանք էլ հոսանքից քշվել: Ահա այսպես է վերջացել Յայջի գյուղի պատմությունը[49]:

Հայտնի դարձավ, որ մեր մեջ վարակիչ հիվանդություն է ընկել: Օրական քանի քանիները մահանում էին, բայց թե ի՞նչ հիվանդություն էր, չկարողացան իմանալ: Թեպետ և խոլերա ըսին, բայց չէ, դա խոլերա չէր: Խոլերան լուծ կունենա, հետո [մարմինը] կսևանա, սա այդ տեսակ նշաններ չուներ: Ընկնողը եղած տեղը մնում ու մահանում էր և տեսնողին կարծել էր տալիս [թե] հանգիստ քնում է: Ես էլ վարակվեցի այդ հիվանդությամբ, սակայն իմ ընկերոջ՝ ռոդոստոցի Կէվրեկյան Կարապետի շնորհիվ մահվանից փրկվեցի: Երբ տեսավ, որ պառկածս տեղից չեմ կարող բարձրանալ, իմ տղոցից մի քանի հոգու կանչեց և ինձ տկլորանալ տալով կարգադրեց կողքի անցնող ջուրը գցել: Այսպես օրական մի երեք անգամ՝ 2–3 օր շարունակելով առողջացա:

Ինչպես ըսի, այստեղ հաց ճարել անկարելի եղավ: Ստիպված էինք մի երկու օր առանց հացի մնալ, գարին դաշտերում հասած էր: Փաշան կարգադրեց հնձել: Ով որ վարժ էր այդ գործին և առողջ գյուղացոց հետ գերանդիներով սկսան հնձել, ձիավորներն էլ իրենց ձիերով կալեցին և 2 օր հետո մենք ունեցանք գարու հաց:

Մի քանի օր հետո Անդրանիկը հրամանատարական ժողով գումարելով, ըսավ. «Այլևս անկարելի է այս բանակով գնալ ոևէ տեղ ու չոքել հայ գյուղացուն գլխուն մեզ ապրեցնելու համար: Ես ո՛չ հաց ունեմ, ո՛չ էլ հագուստ: Ուստի խորհուրդ եմ տալիս՝ յուրաքանչյուր վաշտապետ մեկ-մեկ կողմ գնա իր տղոցմով, առանց գյուղացուն մեծ բեռ լինելու պաշտպանել այդ շրջանի հայությանը»:

---

[46] *Հունիսի 25-ին. տե՛ս Հ. Ռ. Սիմոնյան. նշվ. աշխ., էջ 237:*

[47] *Միասնական, միահամուռ:*

[48] *Նաև 40 զինվորներ. տե՛ս Հ. Ռ. Սիմոնյան. նշվ. աշխ., էջ 237:*

[49] *Հայերը գրավում են երկու լեռնային թնդանոթ, մի քանի հարյուր արկ, հրացաններ և զինամթերք. տե՛ս նույն տեղում, էջ 238:*

Ժողովից հետո 2-րդ բաթալյոնի 2-րդ վաշտի վաշտապետ զորլուցի Պողոսի հետ խորհուրդ ըրինք անցնել Զանգեզուր: Այս Պողոսին ականջները մի քիչ ծանր էին լսում, տղերքն էլ «Սաղը» («Խուլ») էին կոչում:

Մի առավոտ վերցնելով մեր վաշտերը՝ ճամփա ելանք, սարի ստորոտում մի գյուղ հասանք: Այդտեղից մի առաջնորդ վերցնելով բարձրացանք 2–3000 մետր բարձրությամբ մի լեռ, որուն գագաթը ձյունապատ էր: Մինչև ձյունը հազիվ կեսօրին հասանք: Ձյան և ցամաքի միացյալ տեղում մի ջրի ակ էր բխում: Նստանք հանգստանալու և մի քիչ բան ուտելու: Կերանք ու այդ ջրեն խմեցինք: Երբ ոտքի ելանք ճանապահը շարունակելու, մեր մեջ ոչ մի հիվանդ կամ տկար մարդ չէր մնացել: Մտանք ձյունապատ մասին մեջ, ուր ո՛չ ճամփա կար, ո՛չ էլ անցք: Մեր վարպետ առաջնորդը մեզ անցկացրեց լեռան մյուս կողմը, որտեղից մենք ստիպված եղանք նստած սահելով իջնել Քաջարան: Այդ կետից սակարկված գումարը վճարեցինք մեր առաջնորդին, որը հետ մեկնեց դեպի իր գյուղը:

Քաջարանում և իր կողքի գյուղը մնացինք այդ գիշեր, իսկ հաջորդ օրը ուղվեցինք դեպի Ղափան՝ անցնելով մի քանի հայ և ադրբեջանական գյուղերից: Այս վերջին[ներիս] գյուղացիք մեզ ոչ արգելք եղան, ոչ էլ վնաս տվին և մենք էլ նրանց գյուղի կողքով անցանք ու գնացինք:

Ղափանը հանքերու վայր է: Կան մի քանի հանքեր, որոնք պատկանած են եղել օտարերկրացիներին[50]: Պատերազմի պատճառով աշխատանքը դադարել էր: Ղափանում կար Հայ[ոց] Ազգ[ային] խորհուրդ, որը տեղական կառավարությունն էր: Կար նաև մի ինքնապաշտպանության կոմիտե, որը շրջակա ադրբեջանական գյուղերու մոլեռանդ մարդկանցից վախենալով կազմեր էին: Այդ շրջանը, որ կենտրոնից մեկուսացված էր, կառավարվում էին Ազգ[ային] խորհրդով:

Մեր գալուստը իրանց մոտ մեծ ուրախություն պատճառեց: Ուզեցին, որ մնանք իրենց մոտ և միասին պաշտպանենք շրջանը՝ խոստանալով մեզ լավ պահել: Ընդունեցինք: Ես մնացի կենտրոնում, իսկ Պողոսը իր վաշտով գնաց մի ուրիշ շրջան: Այստեղ իմ տղայոց համար հատկացուցին ֆրանսիական հանքի շենքերը, և ամեն օր պարենը բերում էին: Այստեղ մնացինք շուրջ մի ամիս: Ոչ մի միջադեպ չպատահեց:

Մի օր էլ Պողոսը լուր ուղարկեց ինձ, որ միանամ իրան՝ անցնելու համար Գորիս: Ես չհամաձայնեցի, սակայն մեր վաշտի տղոց կամքին դեմ չգնալու համար, որովհետև բոլորն էլ ցանկանում էին գնալ, համաձայնեցի ու գնացինք Գորիս, ուր հազիվ 2–3 օր մնացինք: Պողոսն ինձնից շուտ էր եկել և ինչ որ մի հանձնախմբի, թե պատվիրակության հետ Զաբուղի ձորով անցկացել էր Շուշի: Երբ լսեցին իմ տղերքը, որ Պողոսն իր վաշտով Շուշի է գնացել, ստիպեցին ինձ էլ հետևել նրան: Սակայն Պողոսի բախտը բերել էր և հանդիպել [էր] այդ հանձնախմբին, նրանց միջոցով ապահով անցել: Մեր պարագան տարբեր էր: Զաբուղի ձորը, որը կոչում էին ցամաքային Դարդանել[51] անանցանելի մի

[50] *Հիմնականում ֆրանսիացիներին:*

[51] *Նկատի ունի Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ բրիտանա-ֆրանսիական ռազմածովային և ցամաքային ուժերի կողմից իրականացված Դարդանելի կամ Գալիպոլիի ձախողված լայնածավալ օպերացիան (19. II. 1915–09. I.*

կիրճ էր 3–4 կիլոմետր երկարությամբ, որը տեղական ադրբեջանցիները բռնել էին, և անցուդարձը խափանած: Մեզանից բավական ժամանակ առաջ ռուսական հայ զարաբաղցի զինվորները թողնելով իրենց զորամասերը ուզեցել են անցնել իրենց շրջաններն ու տուն գնալ առանց վտանգի մեծությունը չափելու և ընկել են ճանապարհին, բոլորն էլ առանց մի հոգի ազատվելու:

Այս տեղեկությունները ստանալուց հետո՝ ես չէի կարող խաղի մեջ նետել և իգուր տեղը ոչնչացնել [իմ զինվորներին]: Պետք էր մի պլան պատրաստել, որ առնվազն 90 % ապահովեր մեր նպատակը: Գնացինք Տեղ գյուղը, որը Զաբուղի ձորի ամենամոտիկ հայ գյուղն էր: Ցերեկները անգործ նստում էի, որովհետև հունձքի ամենաեռուն ժամանակն էր, և գյուղացին այդ աշխատանքով էր զբաղված: Երեկոները [գնում էի] հասակավոր և խելահաս մարդկանց մոտ և խորհրդակցում, այդպիսով ուսումնասիրում էի [ձորով անցնելու հնարավորությունները]: Այստեղ մնացինք հազիվ 15 օր: Մի օր վերցնելով 2 զինվոր և երկու հայտնի գյուղացի, ելանք դեպի Զաբուղի ձորի կողմը գնացինք: Ճանապարհին ադրբեջանցի հնձվորների տեսանք, որ իրենց արտերն էին քաղում: Մեզ որ տեսան՝ թողեցին գործերը և սկսեցին փախչել, կարծելով, որ վնաս պիտի հասցնենք իրենց: Ինչքան պոռացինք, որ չփախչեն, մոտ գան, բան ունենք ասելու, մտիկ չտվեցին:

Բավական առաջանալուց հետո՝ նորից ուրիշներու հանդիպեցինք: Այս անգամ ես տեղիցս չշարժվեցի, միայն 2 գյուղացիների ուղարկեցի, որ չվախենան և մոտ գան: Նրանք տեսնելով, որ իրենց հարևան գյուղացիներն են, սիրտ առան ու մոտեցան: Նրանց հարց տվի, թե ուր են գտնվում ձեր ակսակալները (ծերերը, գյուղի մեծավորները), ուզում եմ մի տեսություն անել նրանց հետ: Նրանք անզեն գյուղացի հարևանների վրա վստահելով, որ վատ բան չկա, հոժարեցան գնալ և կանչել: Մինչ այդ մի քիչ առաջ գացինք և մի փոսի մեջ գտնվող բացատում իջանք ձիերից ու նստած սպասեցինք:

Հազիվ կես ժամ էր անցել, իմ խնդրած մարդիկ եկան: Ըստ սովորության՝ իրար ողջունեցինք, իրարու որպիսությունը հարցրինք: Ջուր խնդրեցի, անմիջապես սառը ջուր բերել տվին, խմեցինք: Նրանցից մինը՝ «Էյ աղա, բարի լինի ձեր գալուստը, ինչի՞ ենք պարտական ձեր այցելության», ասեց: Ես էլ իմ կարգին ասացի, որ ես եկել եմ ոչ թե թշնամության կամ վատ արարքի համար, այլ ճամփա ուզելու ձեզանից, որպեսզի Զաբուղի ձորով իմ 200 հոգով ապահով անցնեմ: «Ես Անդրանիկ փաշայի առաջապահն եմ, բանակը ետևիցս գալիս է»: «Խնդրե՛մ, խնդրե՛մ, ճանապարհը բաց է, ազատորեն կարող եք անցկանալ»,– ասեցին: Ես էլ ասացի, որ խոսքը բավական չէ, ինձ ինչո՞վ եք ապահովում, որ ես ազատ պիտի կարողանամ անցնել և ոչ մի վնաս չպիտի կրեմ: «Ինչո՞վ եք ուզում ապահովել»,– հարցրին: Ասացի, որ «Իմ Զաբուղը անցնելուս ժամանակ պետք է, որ առնվազն 10–15 ձեր ակսակալներից որպես պատանդներ ինձ հետ գան մինչև Թթու ջուր[52]: Եթե մեր վրա նույնիսկ մի գնդակ արձակվի՝ իսկույն բոլորը պիտի ջարդեմ, իսկ եթե որևէ վնաս չկրած անցկացնեք, ձեր այդ մարդիկ ողջու[թյա]մբ հետ կուղարկենք»:

1916), որը նպատակ ուներ գրավել Կ. Պոլիսը և Օսմանյան կայսրությանը դուրս բերել պատերազմից:

[52] Գտնվում է Շուշիի մոտ՝ Գարգարի վտակ Թթուջուր գետակի ակունքների շրջանում:

«Այն ժամանակ թույլ տուր մեզ գնալ մեր փաշային (աղրբեջանցիք առհասարակ ամեն շրջանի մեջ գաղտնորեն եկած մի թուրք սպա ունեին իրենց զինյալ ուժերը ղեկավարելու համար, առանց նայելու իրենց աստիճանին՝ բոլորին էլ փաշա էին ասում) տեղեկացնել, առանց նրա կարգադրության ոչ մի բան չենք կարող անել»,– ասացին:

«Լավ,– ասացի,– ձեզ 3 օր պայմանաժամ, եթե 3 օրից ինձ պատասխան չտվիք՝ հավատացնում եմ ձեզ, որ ձեր գյուղերը քարուքանդ կանեմ և քարը քարի չեմ թողներ: Տեսե՛ք, ես դարձյալ ասում եմ՝ չեմ ուզում ձեզ վնաս հասցնել: Հետո ձեր հարևան հայերի հետ ի՞նչ վեճ ունեք, որ այսպես իրարու թշնամու աչքով եք նայում: Քանի որ հարևաններ եք՝ իրարու լավ աչքով նայեցեք և հաշտ ու խաղաղ ապրեցեք: Ոչ՛ դաշնակցական և ոչ՛ էլ մուսավաթական շեֆերի խոսքերին մի լսեք»:

Ու այսպես վերադարձանք Տեղ և սպասեցինք 3 օրը լրանալուն: Իսկապես, 3-րդ օրը նրանց կողմից եկավ մի պատգամավորություն՝ հաղորդելով մեզ մեր առաջարկի ընդունվելն իրենց կողմից: Պայմանավորվեցինք հետևյալ առավոտ միանալու թե՛ տեղի և թե՛ ժամանակի մասին:

Մյուս օրը, առավոտյան մեր Տեղ գյուղի հասակավոր մարդիկը հետս առած վաշտով առաջացանք դեպի Զաբուղի ձորի բերանը: Ակսակալներն էլ եկան: Պայմանական ողջույններից հետո, մերոնց հարցրի, թե իսկապե՞ս սրանք իրենց ակսակալներն են: Հաստատական պատասխան ստանալով՝ վաշտին կարգադրեցի շարժվել: Տեղի գյուղացոց իշխաններից[53] էլ հրաժեշտ առնելով և իրենց հյուրասիրության համար շնորհակալություն հայտնելով՝ հետևեցի վաշտին: Շատ կանոնավոր կերպով և առանց միջադեպի հասանք Թթու ջուր: Այնտեղ տղերքը իրանց մեջ փող հավաքելով, ի նշան շնորհակալության, տվին մեր պատանդներուն և հետ վերադարձրեցինք:

Այս գիշեր ճանապարհին մի գյուղում գիշերեցինք, իսկ մյուս օրը, ճաշին մտանք Շուշի: Մեր քաղաք մտնելե առաջ մեր համբավը հասել էր: Մեզ դիմավորեցին Հայոց Ազգային խորհրդի անդամները[54]: Վաշտս քաղաքի մուտքին գտնվող զորանոցում տեղավորելով՝ ինձ առաջնորդեցին իրենց պաշտոնատեղին և սիրալիր ընդունելություն սարքեցին:

Շուշին, ինչպես ասում են, Ղալա (Բերդ) իսկական բերդ է[55]: 3 կողմից անմագլցելի ձորեր են, միայն մի կողմից՝ Զաբուղի կողմից հավանական է մտնել քաղաք, այն էլ մի ահռելի ժայռի կտորով ճանապարհը փակվում է: Հաղոր-

---

[53] *Ղեկավարներից:*

[54] *Կազմվել է 1918 թ. հուլիսի 22–26-ին Շուշիում կայացած երկրամասի հայության առաջին համագումարում: Ազգային խորհուրդն Արցախի կառավարությունն էր: Նախագահ է ընտրվել Եղիշե Իշխանյանը (1886–1975):*

[55] *Ա–Դոյի վկայությամբ. «Իսկապե՛ս ղալա, ամրոց, բերդ, ուր բազմած Շուշին, որպէս սրաթև արծիւը, մի առանձին հպարտությամբ, իշխում է իր առաջ ձգած տարածութիւնների վրա: ... Շուշին առաջին անգամ տեսնողը բացականչում է՝ «պատերազմների և սխրագործութիւնների մէջ փառք որոնող որպի՞սի մի մարդ դրել է այդ քաղաքի հիմքը ...» [տե՛ս Ա–Դ օ. Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թ.). (Փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանութիւններով), Երևան, 1907, էջ 147]:*

դակցության ճանապարհը՝ Եվլախ–Գորիս, Եվլախից գալիս է Խանքենդի[56] և անցնելով քաղաքից, ներքևից վերև ու մեր եկած ճանապարհով Գորիս է հասնում: Քաղաքը թեքության վրա է կառուցված, ներքևի մասում ադրբեջանցիք, իսկ վերևի մասում հայերն էին ապրում: Քաղաքի մեջտեղից դիրքերով բաժանված են երկու մասի և երկու կողմերն էլ իրենց պահակներն ունեին:

Շուշի քաղաքի շրջանում, բացի մի ադրբեջանական գյուղից, բոլորովին հայաբնակ են: Քաղաքը կենտրոն ունենալով՝ ամբողջ շրջանը բաժանված է 4-ի: 2-ը դեպի Արաքս գետի կողմը, որոնք կոչվում են Վարանդա և Դիզակ, իսկ դեպի Գանձակ (Կիրովաբադ), էլի 2-ը՝ Խաչեն և Ջիվանշիր (Ջրաբերդ):

Հայ Ազգային խորհուրդը մեկուսացած կենտրոնից, ինչպես շատ վայրերում, իրենք իրենց կառավարության ձև էին տված ու ինքնապաշտպանության գործը կազմակերպած և ընթացիկ գործերն էին կառավարում: Ուներ թեմական առաջնորդ և դպրոց, հիվանդանոց (մասնավոր էր և պատկանում էր մի կոմունիստ բժշկի, որի անունը հիշողությունիցս վրիպել է) և ուրիշ վարչական ու կուլտուրական հաստատություններ:

Առաջարկ բերին մնալ Շուշի և միասին պաշտպանել շրջակայքի ու քաղաքի հայությունը, եթե հարևաններից մի հարձակում լինի: Ունեին մի սպարապետ՝ կապիտան Լևոն Վարդապետյան[57], և ինձ առաջարկեցին նրա օգնականի պաշտոնը: Պողոսը մի 10–20 հոգով գնացել էր լեռնային մի գյուղ, մնացյալ զինվորները միացան իմ վաշտին: Ես ընդունեցի մնալ ու միասին պաշտպանել շրջանը և ինձ առաջարկած պաշտոնը: Այստեղ հանդիպեցի պրապորշչիկ[58] Մովսեսյանին, որը նախապես եղել էր խնուսում իմ բաթալյոնում: Ինչպես և ծանոթացա պրոֆեսոր Աճառյանի[59] քրոջ [հետ], որ ժամանակին Շուշի հարս է գնացել և ամուսնու մահանալուց հետո էլ մնացել է այստեղ:

Օրերն անցնում էին խաղաղ: Զմոռանամ ասել, որ այստեղ փաշա ունեին ադրբեջանցիք, որը նրանց զինված ուժերը ղեկավարում էր, բայց մենք իրար երբեք չհանդիպեցինք:

Մի քանի շաբաթներ հետո Ազգային խորհրդին առաջարկ բերի՝ տրամադրել մի 1000 հոգի և ես նրանցով Խանքենդիից [Ստեփանակերտ] իջնեմ դիշերով դաշտ և մի հարվածով գրավեմ Եվլախի կամուրջը, որը դեպի Բաքու տանող երկաթգծի վրա է գտնվում ու այդ ձևով Բաքուի ճակատը գտնվող թուրք բանակի քամակից խուճապ ստեղծեմ: Այդ ձևով օգնենք Բաքուին: Դաշնակցական Ազգային խորհուրդը շատ հանդուգն և վտանգավոր գտավ իմ առաջարկը և մերժեց: Ես նրանց դիտել տվի, որ եթե թուրքը Բաքուն գրավի, նրանից հետո հերթը մեզ պիտի հասնի և մենք անկարող պիտի լինենք դիմադրել:

---

[56] Ստեփանակերտ:

[57] Լևոն Վարդապետյան (1882–1937) – իրավաբան, ՀԽՍՀ արդարադատության ժողկոմ (1923–1927), ՀԽՍՀ Գերագույն դատարանի նախագահ: Ստալինյան բռնությունների զոհ:

[58] Ենթասպա:

[59] Հրաչյա Աճառյան (1876–1953) – ականավոր հայ լեզվաբան, բառարանագիր, ՀԽՍՀ ակադեմիկոս:

Իմ ասածին համաձայն՝ Բաքուն ընկավ[60], և ահագին թվով հայություն ջարդվեցավ[61] թուրք վանդալների և Բահբութ խան Ջիվանշիր[62] անունով մի ճիվաղի կարգադրությամբ: Թեպետև ինքն էլ Պոլսում մի հայրենասեր հայու՝ Թորլաքյանի[63] գնդակով շանսատակ եղավ:

Մի փոքր անց թուրք բանակի հրամանատար Նուրի փաշան[64] մի վերջնագիր (ուլտիմատում) ուղարկեց[65], որ Շուշի քաղաքն իր շրջակայքով հանձնվի իրեն: Դրությունը կրիտիկական էր: Անմիջապես շրջանները մարդ ուղարկվեց նրանց դրությունը պարզելու և ներկայացուցչական ժողովի համար պատգամավորներ ուղարկելու [համար]: Մի քանի օրում պատգամավորները հավաքվեցին և ժողովը բացվելով՝ վիճաբանություններ սկսեց:

Ժողովը տևեց 3 օր և որոշվեցավ ենթարկվել Նուրի փաշային, սակայն առանց թուրք ոչ մի զինվորի մուտքով, կառավարվել ներքին ադրբեջանական և հայ կոալիսիոն[66] մի վարչությամբ: Ես դեմ էի այդ որոշմանը, ինչպես և ուրիշները, բայց մեծամասնությունը այդպես կամեցավ: Եվ քաղաքի երևելիները 2–3 հոգիանոց պատգամավորություն ընտրելով՝ գրավոր պատասխան ուղարկեցին: Պատգամավորները, երբ կհասնեն, Նուրի փաշան իր ներկայության չի ընդունում, այլ իր մարդոցմե մինն առնելով իր պետին է տանում: Սրա վրա պատգամավորները կբանտարկվեն: Մի քանի օր այդպես բանտարկված մնալե հետո, որը մեզ մտատանջության էր ենթարկած, մին էլ տեսնենք եկան և իրենց հետ էլ Գանձակի առաջնորդը[67]: Նուրի փաշան էր ընկերացրել այս վերջինիս մեր պատգամավորությանը: Այս մարդը համաժողովում ելավ ու սկսեց թուրքերու գովքն անել և այնքան երկար խոսեց ու վառ գույներով նկարագրեց նրանց ամեն ինչը, որ մեծամասնությունը մագնիսացած համոզվեց և որոշում տվավ հանձնվելու, թեև շատ ընդդիմախոսեցի, սակայն օգուտ չանցավ:

Տեսնելով, որ այլևս այդտեղ անելիք չունեի, հավաքեցի զինվորներուս՝ խաչենի վրայով անցա Ջիվանշիր՝ Հայաստան գալու նպատակով: Ջիվանշիրցիք

---

[60] *1918 թ. սեպտեմբերի 15-ին Բաքուն գրավվում է օսմանյան բանակի կողմից:*

[61] *Թուրք-թաթարական ելուզակների կողմից սպանվում է շուրջ 30 հազար հայ:*

[62] *Սպանվել է 1921 թ. հուլիսի 18-ին Կ. Պոլսում վրիժառու Միսաք Թորլաքյանի կողմից:*

[63] *Միսաք Թորլաքյան (1889–1968) – ժողովրդական վրիժառու, ՀՅԴ անդամ: Համաշխարհային պատերազմի տարիներին պայքարել է թուրքերի դեմ (1915–1918 թթ.):*

[64] *Նուրի փաշա Քիլլիգիլ (1881–1949) – թուրք ռազմական գործիչ, Օսմանյան կայսրության նախկին ռազմական նախարար Էնվերի խորթ եղբայրը, Կովկասյան իսլամական բանակի հրամանատար, պատերազմական հանցագործ:*

[65] *Վերջնագիրը Շուշի են բերել Խորեն Համասիյուրը (ՀՅԴ) և Գեորգ Մելիք-Շահնազարյանը (էսէռ) 1918 թ. հուլիսի 19-ին: Ինչպես երևում է, հուշագիրը շփոթել է Բաքվի անկման և վերջնագրի օրերն ու ամիսները:*

[66] *Համատեղ, երկու ժողովուրդների ներկայացուցիչներից կազմված:*

[67] *1918 թ. սեպտեմբերի 20-ին ժամանում են Գանձակի Հայոց հոգևոր առաջնորդ Լևոն վարդապետ Փսերյանը (1972–1927) և Սարգիս Տեր-Իսրայելյանը (էսէռ) [տե՛ս Ե. Իշխանեան. Դէպքերը Ղարաբաղում. – «Հայրենիք» (Բոստոն), 1932, № 11, էջ 86]:*

խնդրեցին, որ մնամ իրենց մոտ և խոստացան Շուշիի որոշմանը չենթարկվել և թուրք զինվոր թույլ չտալ մտնել իրենց շրջանը ու կռվով մեռնել: Ընդունեցի այդ առաջարկը և իրենց նախկին ծերուկ կապիտան առաջնորդի հետ սկսեցի դիրքերը ամրացնել: Ոչ մի հարձակում կամ զինյալ հարձակում չեղավ: Մինչև զինադադար[68] հանգիստ մնացինք: Երբ զինադադար եղավ, իմ գործը վերջացած համարելով՝ խնդրեցի ջիվանշիրցիներից, որ թույլ տան ինձ հեռանալ և վերադառնալ իմ հայրենի տունը, որուն քաղցր կարոտը քաշում էի երկար տարիներ: Սիրով ընդունեցին, և ես էլ զինվորներս ազատեցի ու փոքր խմբերով թողեցի, որ անցնեն Հայաստան: Ամենավերջինը ես մեկնեցի 2–3 զինվորներով, ծպտված գյուղացու հագուստով, ներքուստ ունենալով միմիայն ատրճանակս: Ջիվանշիրցիք մի օրվա տեղ ուղեկցեցին ինձ:

Մենք անցանք Գանձակի և գերմանական գաղութի[69] մեջտեղով դեպի Զարդախլու տանող ճանապարհը: Գիշերը մնացինք առաջին փոքրիկ հայկական գյուղում: Հաջորդ օրը շատ դանդաղ քայլելով 2 օրում հասանք Զարդախլու և ավանի մուտքին մեր ունեցած հացերին գնացինք Զոլախ Ասլանի տունը: Սա մի փոքրիկ հյուղակ էր: Ինքը տանը չէր: Կինը մեզ ընդունեց և հյուրասիրեց: Այդ գիշեր մնացինք այդտեղ: Հաջորդ օրը Ասլանը եկավ: Սա վելեդուբյուն[70] (առաջնորդ) էր անում, ոտին մեկն էլ կաղ էր, որուն համար «Զոլախ» էին ասում:

Մենք իրեն հայտնեցինք, որ ուզում ենք Հայաստան անցնել իր առաջնորդությամբ: «Ինչու ոչ, սիրով, հենց հիմի մի խումբ անցկացրի, այդ տեղից եմ գալիս»,– ասեց, և մենք իր ստանալու վարձատրության մասին սակարկեցինք և որոշեցինք 200 ռուբլի տալ իրեն:

Բոլոր թղթերը, որ ունեինք մեր վրա՝ պետք էր փչացնեինք, իմ ատրճանակը ինքը պետք է կրեր մինչև Հայաստանի սահմանը, դրանից հետո պետք է վերադաձներ: Այդ օրը երեկոյան ճանապարհ պիտի ելնեինք և մինչ այդ տնից դուրս ելնելով ավանի մեջ չպետք է երևայինք: Բոլոր պայմաններն էլ ընդունեցինք: Իմ օրագրությունը, որ ունեի, ըստ մեր պայմանագրության՝ ստիպված եղա հակառակ իմ կամքին այրել:

Երեկոյան մութը կոխելու մոտ կնիկը մի փոքր կապոց ուտելիք պատրաստելով մեզ տվավ, և մենք էլ ճամփա ելանք: Ավանից դուրս գալու պահին հեռվից տեսանք թուրք զինվորներ և սպաներ, որոնք երթևեկում էին: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մադրասում կնքված զինադադարի համաձայն Օսմանյան կայսրությունը պարտավորվում է զորքերը դուրս բերել գրավված տարածքներից: Բավական տեղ գնալուց հետո Մատեն ասված վայրին, երբ մոտեցանք, մի պահակ հեռվից ձայն տվավ՝ մեր ովքեր լինելը իմանալու համար: Ասլանը մեզ հրահանգեց ընավ չխոսել, և ինքը պատասխան տալով, գնաց, մոտեցավ պահակին ու հետը ինչ-որ բաներ խոսեցավ և վերադառնալով՝ «Դե՛ քայլե-

---

[68] *Նկատի ունի 1918 թ. հոկտեմբերի 30-ի հունական Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում Անտանտի և Օսմանյան կայսրության միջև կնքված զինադադարը:*

[69] *Հավանաբար, Ելենդորֆի:*

[70] *Այդպես է փաստաթղթում:*

ցինք, գնանք, ամեն ինչ կարգին է, դզել եմ», ասավ: Մթնել էր արդեն, երբ մենք սկսեցինք շարունակել երթը: Կեսգիշեր էր, թե մոտ կեսգիշերվան, չեմ կարող ասել, որովհետև ժամացույց չունեի, մի գյուղի մոտեցանք, որուն աջ կողմից մի ջուր էր անցնում: Շները սկսեցին հաչալ: «Մի՛ վախե՛ք, հետևեցեք ինձ»,– ասելով՝ թեքվեց դեպի գյուղը ջրից անցնելով: Մենք էլ հետևեցինք իրեն ու մտանք գյուղ: Ադրբեջանական մի գյուղ էր: Գնաց, մի դուռ խփեց: Ներսից մի կնոջական ձայն՝ «Ո՞վ է», հարցրեց: «Ես եմ, Ասլանը: Յուսուֆը տանը չի՞»,– հարցրեց: «Չէ՛, տանը չէ, բայց ոչինչ, մտեք»,– ասաց կինը և մեզ առնելով՝ դուռը ծածկեց ու մեզ առաջնորդեց մի սենյակ, իսկույն ցախ բերելով օջախը վառեց, և մենք ալ շուրջը նստանք ու մեր թաց ոտքերը չորացրեցինք:

Կինը մեզ համար կարտոֆիլ բերեց՝ մոխրախորով անելով և հաց բերելով մեզ կշտացրեց: Մի երկու ժամու չափ հանգստանալուց, հետո շարունակեցինք մեր ճանապարհը: Առավոտյան՝ արշալույսին, հասանք մի մալականի գյուղ: Կտրել անցնելով այդ գյուղի միակ ճանապարհը՝ վերջավորության հանդիպեցինք մի ջրաղացի և նրա շարունակության՝ մի ջրի: «Անցեք այս ջրից, հանդիպակած եզրը Հայաստանն է: Դե՛, բարի ճանապարհ»,– ըսավ ու մեր ջուրն անցնելե հետո ինքն էլ վերադարձավ:

Մենք մեր ճանապարհը շարունակում էինք դաշտերու միջով, երբ հանդիպեցինք երկու կտրիճների, որոնք մի ոչխար էին տանում: Բարևելով միմյանց, մեզ հարցրին, թե ո՞ւր ենք գնում: Երբ իմացան, որ Ղարաբաղից ենք գալիս ու Դիլիջան ենք գնում, մեզ ասացին, այդ ճանապարհը մենք շարունակենք և Բաշքենդ[71] գյուղը, որը հեռու չէ, այնտեղ հարցրեք դարբին Պետրոսի տունը և ասեք իրեն, որ իր երկու որդիներն են մեզ ուղարկել իրեն [մոտ] և մինչև իրենց վերադարձը մնալու ենք այդտեղ: Իրենք էլ խոստացան շուտով վերադառնալ:

Ճիշտ այդպես էլ արեցինք: Տեսանք դարբին Պետրոսն իր աշխատանոցում՝ սալին վրա չիկացած երկաթը կռանով[72] ծեծում էր: Մեզ տեսնելով՝ երկաթը կրակին մեջ խոթելով աշխատանքը թողեց և մեր բարի հաջողումին՝ «Բարով, հազար բարով», պատասխանեց: Հայտնեցինք իր որդիների հանձնարարությունը: Իսկույն մեզ տարավ իր տունը, կարգադրեց հարսներին մեզ համար նստելու տեղ պատրաստեն թոնրի վրա, և ինքը ներողություն խնդրելով ու մեզ հանգիստ մաղթելով՝ իր գործին գնաց: Հարսները պետք եղածներն անմիջապես բերին և բազմոց սարքեցին ու գնացին: Մենք էլ փառավոր կերպով երկնցանք բազմոցների վրա և, կարծում եմ, որ մի փոքր էլ մրափեցինք: Մինչ այդ հարսները ջուր բերին և մեր ոտները լվացին: Թեև ես անհարմար դաս, բայց մեր մի ընկերը ծածուկ ասաց, որ մերժելը տանտիրոջ համար անարգանք է: Ստիպված համակերպվեցի:

Ոտն լվանալուց հետո էլ անակնկալ կերպով ոտս համբուրեց հարսը: Սա արդեն չափն ու սահմանը անցավ: Սա ի՞նչ ստրկական օրենք է, որ կինը այսքան ցածրանում է: Հարգանք է եղել: Չէ, ընթերցող սիրելի, այս տեսակ հարգանք դուցե Քսենոֆոնի ժամանակները եղել են: Նրանից այս կողմ 2000

[71] *Վերին Շորժա:*

[72] *Միջակ մեծության մուրճ՝ ձեռքով մետաղները կռելու և հարթեցնելու համար:*

տարի է անցել և 20-րդ դարում Հայաստանում դեռ շարունակվել այսպիսի կարգեր երևակայել անգամ չէի կարող:

Ես վստահ եմ, որ սով[ետական] կարգերու Հայաստան մուտքով այդ տգեղ և անհարմար օրենքները վերացած կլինեն: Եվ ի վերա ամենայնի՝ մանչ էլ էին:

Մինչ մեր զարթնելը տղերքը եկել ու ճաշ էին պատրաստել տվել: Սեղան բաց արեցին, նստանք մի լավ կերանք ու խմեցինք: Այդ գիշեր այդտեղ մնացինք, իսկ հաջորդ օրն առավոտ շուտ ճամփա ելանք դեպի Դիլիջան: 3 օրից հասանք Դիլիջան: Ուղիղ գնացի քաղաքի պարետին ներկայացա՝ խնդրելով, որ մի անցագիր տա Վրաստանի վրայով Պոլիս՝ ծննդավայր գնալու համար: Պարետն ի զորու չլինելով ինձ անցագիր տալ, մերժեց: Խորհուրդ տվավ երթալ Երևան և այն տեղից ստանալ:

Տեսնելով, որ ճար չկա՝ ստիպված Երևանի ճամփան բռնեցինք: Փոխադրական էլ չկարողանալով ճարել, դարձյալ ոտով 3 օրից հասանք Երևան: Ուղիղ գնացի գեներալ Սիլիկյանի[73] մոտ ու խնդրեցի մի անցագիր Հայաստանից դուրս գալու համար: Սակայն նա, առանց իմ ասածը հասկանալու՝ «Դժբախտաբար կադրերը լրիվ են և այլևս սպայի կարիք չունենք», ասաց: Ես էլ ի պատասխան նրան ասացի, որ «Ես չեմ եկել պաշտոն խնդրելու, այլ անցագիր»: «Էհ, դա ուրիշ հարց է, այդ կարելի է»,– ասելով՝ մի թուղթ տվեց Ներքին գործերի նախարարության վրա և այնտեղ ուղարկեց: Հազիվ էի հասել, մի խուճապ տիրեց: Բոլորն իրենց գործերը թողած՝ դուրս էին վազում: Պատճառը հարցնելով իմացանք, որ ֆինանսների նախարար Կարճիկյանին[74] են սպանել իր պաշտոնատեղում: Եվ սպանողն էլ Իգոր[75] անունով ծանոթ մի դաշնակցականն է եղել:

Պաշտոնեությունը, որը գործը թողնելով ոճիրին վայրն էր գնացել, 1–2 ժամ հետո հազիվ իր գործին գլուխը [անցավ]: Մի քանի օր երթալ-գնալուց հետո հազիվ կարողացա անցագիրս ձեռք բերել: Մոտ 15 օր սպասեցի, որ մի գնացք Երևանից ճամփա ելներ դեպի Թիֆլիս, բայց իզուր՝ ոչ ածուխ կար, ոչ էլ փայտ, որ [շոգեքարշի] կաթսան տաքացնելով շոգի պատրաստեին:

Այդ միջոցին Ջաղեթյանի[76] թաղումը կատարեցին և դագաղը Աբովյանի[77] կողմից բերելով, մեր հիմիկվա երաժշտական կոմեդիայի թատրոնի առաջ պատվանդանի վրա դրին: Նույն պահուն Ավետիս Ահարոնյանը[78], որը Պոլիս իր կատարած պատգամավորությունից հազիվ էր վերադարձել, թատրոնի առաջ մի բարձր տեղ ելնելով դամբանական խոսեց, որուն ինքս ներկա էի և աչքերովս տեսա:

---

[73] Մովսես Սիլիկյան (Սիլիկով Մոիսեյ, 1862–1937) – ռուսական և հայկական զինված ուժերի գործիչ, ռուսական բանակի գեներալ-մայոր, հայկական բանակի գեներալ-լեյտենանտ: Ստալինյան բռնությունների զոհ:

[74] Խաչատուր Կարճիկյան (1882–1918) – պետական, քաղաքական գործիչ, ՀՀ ֆինանսների նախարար, ՀՅԴ անդամ: 1918 թ. նոյեմբերի 14-ին սպանվել է ենթասպա Եգոր Տեր-Մինասյանի կողմից [տե՛ս «Զանգ» (Երևան), 17. XI. 1918]:

[75] Եգոր Տեր-Մինասյան (1895–1956)– հայկական բանակի սպա:

[76] Ազգանունն ընդգծված և մատիտով ավելացված է՝ Կարճիկյանի:

[77] Աստաֆյան փողոցի:

[78] Ավետիս Ահարոնյան (1866–1948) – ազատագրական, քաղաքական, պետական և գրական գործիչ, ՀՅԴ անդամ:

Ի վերջո տեսնելով, որ սպասելը վերջ չունի՝ «Մաուզեր» ատրճանակս ծախելով որոշեցի ոտքով գնալ: Աշտարակի, Օշականի և Բաշ Ապարանի ճամփով Արագածի ձյունապատ լեռներով անցա մյուս կողմը և իջա Համամլու[79]: Այդ տեղից էլ երկաթգծի երկայնքով Կարակիլիսա (Կիրովական[80]) և մինչև Սանահին կայարանը, որն արդեն վրացական հող էր: Դեռ չհասած Սանահին ...[81] կերան կայարանից մի քիչ այն կողմ սահմանն էր, և սահմանապահ զինվորները մի փոքր կամրջի երկու կողմերը պահում էին: Թղթերս քննելով՝ թույլ տվին անցնել:

Սանահին կայարանից մինչև Թիֆլիս գնացքով գնացինք: Այստեղ հանդիպեցի մեր տղոց մի մասին, որոնք զանազան ճամփաներով եկել-հասել էին Թիֆլիս:

Խնդրեցին ինձնից, որ գնամ Վրաստանի հայ դեսպան պ[ա]ր[ոն]Ջամալյանի[82] մոտ, որպեսզի վրաց կառավարությանը բարեխոսե՝ մի վագոն տրամադրել ձրիաբար մինչև Բաքու իրենց փոխադրելու համար: Գնացի, խնդրեցի, բայց պ[ա]ր[ոն] Ջամալյանը հանձն չառավ այդ փոքրիկ ծառայությունը և ոչ էլ ինքը վճարեց:

Խաչատուրյան Արամ անունով ընկերս և թաղեցիս, որն այն ժամանակ Հավլաբարի թատրոնի տոմսավաճառ Նինայի հետ ամուսնացրինք, ինձ տեսնելով՝ առավ տուն տարավ և թույլ չտվավ, որ ուրիշ տեղ օթևանեմ: Իմանալով, որ Պոլիս եմ գնալու, կնոջ հետ նկարվելով հատ մը ինձ տվավ, որ մորը տանեմ: Նկարվելն ու ստանալը 8–10 օր տևեց: Մինչ այդ Թիֆլիսում ման էի գալիս՝ հանդիպելով մի շարք հին ընկերների, որոնց հայտնեցի Պոլիս երթալու նպատակս: Ինձ խորհուրդ տվին Բաթումով չգնամ, քանի դեռ թուրքերը այնտեղ են, այլ Փոթիով, ուր կարելի է Պոլիս գնացող նավեր գտնել:

Համոզվելով այդ խորհրդին, որ ինձ տվին՝ Թֆլիսից գնացի Փոթի: Սակայն հայտնի եղավ, որ ոչ մի նավ Պոլիս չի գնում այդտեղից: Մի քանի օր մնալուց հետո որոշեցի Բաթում գնալ և այնտեղից նավ առնել: Վրացական գնացքներն աշխատում էին մինչև Նաթանեբի կայարանը, այնտեղ աջարականը փոխադրվելով կարելի էր Բաթում գնալ: Բաթումից 2 օրը մի անգամ էր գնացքը: Երբ ես Նաթանեբի կայարանը հասա, արդեն պատրաստ էր գնացքը, տոմս վերցրի ու մտա վագոն՝ սպասելով, որ գնացքը ճամփա ելնե: Քիչ անց երկու վրացական ոստիկաններ մոտ եկան և հրավիրեցին վագոնից իջնել ու հետևել իրենց: Պատճառը հարցրեցի՝ բան չասեցին: Ստիպված հետևեցի իրենց, որ մի պանդոկ առաջնորդեցին ու գնացին: Գնացքը գնաց և ես այստեղ մնացի[83]:

---

[79] *Սպիտակ:*

[80] *Այժմ՝ Վանաձոր:*

[81] *Ընթեռնելի չէ:*

[82] *Արշակ Ջամալյան (Իսահակյան, 1882–1940) – հասարակական, քաղաքական, պետական գործիչ, ՀՅԴ անդամ: Կամավորական շարժման մասնակից: ՀՀ դեսպանը Վրաստանում (1919), ՀՀ խորհրդարանի անդամ:*

[83] *Կատարել է հետևյալ լրացումը՝ «Ծանոթություն: Այս տեղը բաց թողնելուս պատճառը թանաքիս պատճառով է: Մ. Իշլեմեջյան [ստորագրություն]»:*

Հաջորդ օրը, որովհետև գնացք չկար, մնացի: 3-րդ օրը, երբ գնացքը եկավ, նորից վագոն բարձրացա: Նորից այն 2 ոստիկանները եկան ու առին ինձ և այս անգամ տարան մի դատարկ խանութի մեջ բանտարկեցին՝ առանց պատճառը հայտնելու:

Առավոտ, երբ զարթեցին ինքզինքս վատ զգացի: Ժամը 10-ի ժամանակ 2 հեծյալ ոստիկանների ուղեկցությամբ 25 վերստ (վերստը 1200 մետր է) հեռու Օզուրկյոզ[84] անունը քաղաքը տարան հետիոտն և մի ոստիկանատուն հանձնեցին: Այնտեղ ալ ավելի վատ զգացի ինձ և տախտակամածին վրա պառկեցա մինչև հաջորդ իրիկուն, երբ բժիշկ կանչել հարկադրվեցին: Բժիշկը քննելով ինձ տեսավ, որ տիֆոզ եմ, կարգադրեց անմիջապես հիվանդանոց փոխադրել: Հիվանդանոցը քաղաքից դուրս էր, մոտ մի կիլոմետր հեռու, այստեղ էլ ոտքով տարան: Մի մահճակալի մոտ կանգնած շորերս էի հանում, էլ չեմ իմանում, թե ի՞նչ եղավ:

Հետո իմացա, որ ինձ ձերբակալելուս պատճառն այն է եղել, որ հայ-վրացական պատերազմն[85] է սկսել, և ես էլ որպես հայ սպա գերի եմ ընկել անգիտակցորեն: Մոտս կար 10–20 հազար ռուբլի փող: Երբ աչքերս բաց արեցի, տեսա, որ մի սիրուն օրիորդ նստել է մահճակալիս մոտ բալալայկա (մի նվագարան) է նվագում: «Ու՞ր եմ»,– ասացի ինքնիրենց[86]: «Վտանգն անցել է»,– ասաց: Այդ օրիորդն այդ հիվանդանոցի գլխավոր քույրն է եղել, անունն էլ Նինո: Հետո, որ լավացա մի օր բացատրվեց: Ինձ առաջին իսկ տեսնելուն պես սիրահարվել է վրաս և ամեն ջանք թափել, որ ստույգ մահից ազատի ինձ:

Մի երեկո մի վրացի, կարճ հասակով, լեցուն մարմնով մի սպա եկավ մոտս հարբած վիճակի մեջ, ինձ ու հայերն անպատվեց: Բավական (ներեցեք արտահայտությանս) հաչեց և, ի վերջո, գնաց: Հաջորդ առավոտ, երբ զարթնեցի գլխուս վրա սվինավոր մի զինվոր տեսա՝ պահակ կանգնած: Խորհեցի, քանի որ լավանալու ճամփուն մեջ եմ, չփախչելու համար վրաս պահակ են կանգնեցրել: Ամեն 2 ժամը մի անգամ փոխվում էին: Տեսա, որ այդ պահակները բոլորն էլ թուրքեր են: Սրանք աջար Ասլան բեկի հետ, որը նախապես թուրք բանակի սպա էր, որուն շատ լավ ծանոթ եմ եղել Պոլսո Գում-Գափուից, թողնելով թուրք բանակը կանցնեն վրաց կողմը և Ասլան բեկը նրանցով կազմում է մի գունդ ու նշանակվում է Օզուրկյոզի գարնիզոնի[87] պետ:

Երբ այլևս ցուպի օգնությամբ սենյակում մեկ-մեկ քայլում էի, տեսնում էի, որ ուժերս այնքան էլ չեմ վերստացել, իսկույն մահճակալի վրա փռվում ու հանգստանում էի:

Մի քանի օրեր հետո, երբ արդեն կարող էի հիվանդանոցի դուռը գնալ, բալկոնում մի աթոռ վերցնելով նստեցի: Քիչ անց տեսա, որ Ասլան բեկը մի քանի հետևորդներով եկավ: Ներս մտած ժամանակ ոտքի ելա ու ողջունեցի զինքը:

---

[84] *Օզուրգեթի:*

[85] *Հայ-վրացական պատերազմը (07. XII – 31. XII. 1918) մղվել է Լոռու չեզոք գոտու համար: Մարտական գործողությունները դադարեցվել են դաշնակից տերությունների միջամտությունից հետո:*

[86] *Ինքս ինձ:*

[87] *Կայազորի:*

Տեսնելով ինձ մոտեցավ և ճանաչեց: «Դու այստեղ ի՞նչ գործ ունես»,– ասաց: Ես էլ պատմեցի իմ գլխուն եկածները: «Լա՛վ, լա՛վ, դու միայն աշխատիր լավանալ, մնացյալը հեշտ է: Երբ հիվանդանոցից դուրս գրվես, մոտս արի»,– ասաց ու հիվանդանոցը այցելելուց հետո մեկնեց:

Երբ այս գրության մեջ էի, մեկ-մեկ գնում էի Նինոյի սենյակը իր հրավերով և խոսում էինք: Մի անգամ հարց տվեցի, թե այս պահակները ինչու են հսկում իմ վրա: Ասաց, որ այն գիշեր, այն սպան, որը հարբած վիճակում եկավ քեզ անպատվեց, ուզում էր քեզ ատրճանակով սպանել: Հենց նրա համար էլ գարնիզոնին զանգահարեցի, որն անմիջապես պահակ ուղարկեց քեզ պաշտպանելու համար:

Մի վրացերեն այբբենարան նվիրեց, որ վրացական տառերը ու կարդալ սովորեմ և ինքն էլ օգնում էր: Էլի անցան մի քանի օրեր, և բժիշկը ինձ լավ գտնելով՝ հիվանդանոցից դուրս գրեց: Մի պահակի ուղեկցությամբ ուզում էին կառավարչատուն ուղարկել: Խնդրեցի պահակից, որ մի քանի րոպեով Ասլան բեկի հետ հանդիպենք ու հետո գնանք: Զմերժեց պահակը, և մենք մտանք Ասլան բեկի գրասենյակը, որը մեր ճանապահի վրա էր:

Ասլան բեկը լավ ընդունելություն ըրավ և թեյով հյուրասիրեց ու ասաց, որ բնավ չվախենամ, մի քանի օրից ազատ կարձակեն ինձ: Հրաժեշտ առնելով մեկնեցինք ու գնացինք կառավարչություն, ուր մի քանի թղթեր ու ինձ հանձնեցին պահակին, որ տանի: Խոսակցությունը վրացերեն լինելով՝ բան չհասկացա: Պահակն ինձ տարավ բանտ, ուր գտա մի հայ: Եթե չեմ սխալվում Միքայելյան անունով, ընկեր Սեբաստիայի ծանոթ մի գյուղից, որն ինձ պես գերի էր: Այս Միքայելյանը իր հուշերի Փարիզի «Հառաջ» թերթում տեսա որպես թերթոն հրատարակված՝ 1933 կամ 1934 տարիներին և ինձ էլ ակնարկած էր՝ Գում-Գափուցի Միքայել անունով: Այդ թերթոնն ունեի, սակայն ինչպես է եղել՝ կորսվել է:

Հաջորդ առավոտ Միքայելյանն ու ինձ 2 ձիավոր ոստիկանների հսկողությամբ տարան հետիոտն Նաթանեբի կայարանը և գնացքն առնելով հասանք Քութայիսի: Այստեղ մեզ առաջնորդեցին քաղաքի բանտը: Եվ որովհետև ոչ բոլորովին առողջացած էի, ճամփու հոգնածությունից վատ զգացի ինձ և առաջին րոպեից հիվանդանոց գրվեցի: Երեկոյան դեմ, երբ գերիներին ազատ թողնելու հրաման եղավ, կարծես բոլորովին առողջացա և դիմելով բժշկին՝ խնդրեցի դուրս գրվել:

Ես էլ բոլորի նման բանտից դուրս եկա և չիտակ գնացի կառավարչություն՝ ունեցածս թղթերն ու փողերս ուզելու, որ Օզուրկյոդում էին վերցրել: «Այստեղ չկա, դեռ չի եկել, գնացեք այնտեղից վերցրեք»,– ասացին ու ճամփեցին ինձ: Ստիպված հետ դառա մինչև Օզուրկյոդ: Այնտեղ էլ չկա՝ «Մենք ուղարկել ենք», ասեցին և ինձ անելանելի դրության մեջ դրին: Այն ժամանակ դիմեցի Ասլան բեկին: Սա էլ ասաց, որ «Լա՛վ է լռել», քանի որ մենակ եմ: Նույնիսկ կարելի է հուսալ տեղացիներից, որ կանհայտացնեն էլ[88]: «Այս երեկո ընտանիքս Բաթում է գնալու, նրանց հետ անցիր, գնա: Ճանապարհածախսը ես կվճարեմ»: Խորհելով, որ ամեն ինչ կարելի է սպասել նրանցից, ստիպված հա-

[88] *Այսինքն՝ կարող են ֆիզիկական հաշվեհարդար տեսնել:*

մակերպվեցի և իր ընտանիքի հետ կառքով եկանք Նոթանեբի կայարանը և այդտեղից էլ գնացքով Բաթում: Երբ այդտեղ հասանք, գնացի հայ եկեղեցվո հոգաբարձության դիմեցի՝ խնդրելով, որ ինձ մի ...[89] տա, մինչև Պոլիս մեկնելը: Պատմությունս լսելով՝ կարգադրեցին եկեղեցի գնալ և այնտեղ մնալ: Թեպետ Բաթումիին անծանոթ էի, բայց և այնպես հարցնելով գտա: Այդ գիշեր մնացի, բայց հաջորդ օրը տեղվույն քահանան, որ կին չուներ, մի ուրիշ կին էր պահում գաղտնորեն, չուզելով, որ ես գաղտնիքը իմանամ, դժկամեց իմ այնտեղ մնալուս: Ես խնդիրը հայտնեցի հոգաբարձության, որը կարգադրեց իմ այնտեղ մնալը և ինձ էլ մի քանի օրվա համար ապրուստի փող տվավ:

Անգլիացիք արդեն Բաթումը գրավել էին[90]: Լսեցի, որ հորաքրոջս որդին՝ Հակոբ Կյումյուշյանը, անգլ[իական] բանակում կապիտանի աստիճանով ծառայում է և Բաթումում է գտնվում: Գնացի Բաղ-Նավալ[91] և անգլ[իական] իշխանություններին հարցրի ուր լինելը: «Հենց երեկ Պոլիս մեկնեց»,– ասացին: «Եթե ցանկանում ես տեսնել, կարող ենք քեզ Պոլիս ղրկել»,– ասացին: Իմ ուզածն էլ այդ էր: Համաձայնվեցի: Մի շաբաթվա պարեն տվին և «Շոգենավին սպասիր, մի երկու օրից կլինի», ասացին:

Այդ երկու օրը Բաթումում ման եկա մինչև նավուն գալը: Նավը եկավ և զինաթափ եղած թուրք սպաներ լցնելով, ինձ էլ նրանց հետ, ճամփա հանեցին: Չորս օրվա փոթորկալի մի ճամփորդությունից հետո հասանք Պոլսո նավահանգիստ: Իմ անցագիրը, որ անգլիացիները տվել էին, ստուգումից հետո քաղաք դուրս գալու իրավունք տվեցին[92]:

Օրը տարաժամած[93] [էր]: Ղալաթիո[94] քարափից անցնելով՝ կամուրջը հետիոտն գնացի, հասա մեր տունը: Անունը չկար, ինչպես և կողքի տները բավականին մեծ տարածության վրա ավերակներ կային միայն: Ապշած դիտում էի և մտածում գիշերվա այս պահին ո՞ւր գնամ, ո՞ւր փնտրեմ մերոնց: Հայտնի եղավ, որ հրդեհը, ինչպես ուրիշ շատ տներ, մերն էլ էր լափել: Անզգայաբար, երբ հետ դարձա, տեսա, որ Շիշմանյան դպրոցի կողքի քարուկիր տանը լույս կա: Սա մեր հարևան տիկին Աղավնիի տունն էր: Մտածեցի, որ եթե տիկին Աղավնին էլ տեղափոխվելիս [եղած լինի] այս նոր բնակիչները կարելի է մերոնց հասցեն իմանան: Եվ որոշեցի դուռը բախել: Դռան զանգը քաշելուս մի կանացի ձայն, որ լավ հիշեցի՝ տիկին Աղավնունն էր՝ «Ո՞վ է», ասաց: «Ես եմ»,– պատասխանեցի: Ճանաչելով իմ ձայնը՝ «Դուն ո՞վ ես», ասաց: «Ես եմ, Խաչատուր աղային տղան, Միքայելն եմ»,– որ ասացի՝ իսկույն բացեց դուռը և գորովալի սիրով փաթաթվեց ինձ և «Լավ ժամանակին եկար», ըսավ:

Իմ առաջին հարցումը եղավ, թե ո՞ւր են մերոնք: «Այստեղ են, հեռու չեն, արի մի քիչ նստիր, միասին կգնանք»,– ասելով՝ ձեռքս բռնեց և սենյակ տարավ նստացուց: Մինչև ամուսնու գալը բավականին խոսեցինք:

---

[89] Հավանաբար՝ ապաստարան:
[90] 1918 թ. դեկտեմբերին:
[91] Նավահանգիստ:
[92] Կ. Պոլիս է եկել 1919 թ. սկզբին. տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 9, թ. 22:
[93] Անպատեհ, անհարմար:
[94] Գալաթիա:

Ճաշից հետո ելանք մեր տունը գնացինք, որ հազիվ 2–300 մետր հեռու էր: Ես մի քիչ հեռու կանգնեցի: Տիկին Աղավնին մեր տան դուռը բախեց: Մի պատուհան բացվեց և «Ո՞վ է», ասվեց: Կիսախավարի միջից մորս դիմագիծը ճանաչեցի: «Ես եմ, տիկին Էֆթիկ, բացա արա դուռը, Միքայելին կողմե մի մարդ եմ բերել լավ, լավ լուրերով»,– ըսավ տիկին Աղավնին:

Մայրս եկավ, դուռը բաց արեց ու մենք ներս մտանք: Մայրս տեսնելով ինձ՝ անմիջապես «Վա՛յ Միքայելն է», ասելով փաթաթվեց վզիս ու իր քաղցրիկ համբույրներով ողողեց երեսներս:

Մեր աղմուկից եղբայրս էլ սենյակից դուրս եկավ և ինձ տեսնելով՝ վզիս փարվելով ողջագուրեց: Ելանք վեր՝ հյուրանոց սենյակը: Տեսնելով, որ հայրս չի երևում, հարցրի, թե նա ո՞ւր է: Պատասխանեցին, որ այստեղ է, վերի հարկը հիվանդ պառկած է: Իսկույն գնացի մոտը և որդիական անկեղծ սիրով ու կարոտով ձեռքերը համբուրեցի: «Փա՛ռք քեզ աստված, փա՛ռք քեզ տեր, զավակս դարձյալ տեսա: Երկար տարիներուս կարոտն առի, եթե որ մեռնեմ էլ հոգ չի»,– ասաց:

Խեղճ հայրս երկար ժամանակ անկողնո ծառայել է[95] և միշտ իմ ճամփին է նայել անհույս: Մորաքույրս միշտ մխիթարում է եղել, ասելով, որ «Քենեկա՛լ, հույսդ մի կտրիր, նա մի գեղեցիկ օր մեջտեղ կելլնե: Համբերիր թող սա պատերազմը մի վերջանա: Նա անպայման Կովկաս է անցած և այդ իսկ պատճառով նամակ չի կարող գրել»:

Սակայն, ավաղ, խեղճ հայրս հազիվ 13 օր վայելեց իր մի հատիկ որդվոյն ներկայությունը և փակեց աչքերն ընդմիշտ հրաժեշտ տալով այս անցողական աշխարհից 84 տարեկան հասակում: Թաղումը կատարեցինք շքեղորեն, 1919 թ. փետրվարի 13-ին և մարմինը ամփոփեցինք մեր պապենական դամբարանում, որը գտնվում է Պոլսո Բաշկլրի գերեզմանոցում:

Հակառակ նրան, որ դեռ բոլորովին ուժերս չէի գտած, բայց կարող էի աշխատել: Դիմեցի Ազգ[ային] պատրիարքարան՝ պատրիարքական տեղապահ Նարոյան սրբազանին[96], մի գործ խնդրեցի: Նա էլ մի հանձնարարագրով ղրկեց Հայ տարագրելուց օգնության կոմիտեին, որտեղ ինձ գրագրության մի գործ տվին 25 ոսկի թղթադրամով ամսական: Մի քանի ամիս հետո տարագրելոցը և որբախնամը միանալով՝ «Ազգային խնամատարություն» անունը առան: Այդ ժամանակ ինձ նշանակեցին գործ հայթայթող գրասենյակի պետ: Մի ժամանակ աշխատելուց հետո՝ մտադրվեցի անցնել Կիլիկիա: Նախ Իզմիր գացի՝ հորեղբորս մոտ տեսության, ուր 2 ամսվա չափ մնալուց հետո անցա Կիլիկիա, որտեղ գործող 4 կուսակցությանց (Հնչակյան, Դաշնակցական, Ռամկավար և Վերակազմյալ Հնչակյան) և երեք հարանվանության (Լուսավորչական, կաթոլիկ և բողոքական) ներկայացուցիչների հետ համատեղ մի ժողովում հիմնեցի Կիլիկյան հայ արիներու միությունը: Նշանակվեցա ընդհանուր պետ, օգնականներ ունենալով 4 աշխույժ երիտասարդներ՝ Թելլալյան Արմենակ, Կա-

[95] *Այսինքն՝ գամված է եղել անկողնուն:*

[96] *Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյան (1875–1944) – Կ. Պոլսի Հայոց պատրիարք (1927–1944):*

բապետյան Կարպիս, Ուղուրլյան Հայկ (4-րդի անունը հիշողությունից վրիպել է):

Կաթոլիկների եկեղեցու բակը, որը գտնվում էր Աղանայի կենտրոնում, սիրահոժար տրամադրվեցավ մեր երեխաներին՝ արիներին մարզանքի համար: Ամեն երեկո, դպրոցից հետո արիները գալիս էին այս հավաքավայրը, թե՛ մարզվում և թե՛ սկաուտական գիտելիքներ սովորում: Շատ քիչ ժամանակվա մեջ ունեցանք 1500-ի չափ երեխաներ: Մի երդման հանդես սարքեցի, ուր մոտավորապես 2000 ոսկի թրք[ական] թղթադրամ հավաքվեց, որը լիուլի փակեց այն պարտքը, որ արել էինք արիների հանգստի և հարակից առարկաների գնման [համար]: Այդ հանդեսից հետո մեր վարկը բարձրացավ, ուր և ում դիմում էինք մեր կարիքների համար չէինք մերժվեր:

Այդ միջոցներին թուրքերը սկսել էին չեթեական[97] գործունեություն: Որոշվեցավ միջկուսակցական մարմնո հովանավորությամբ հայ ազգ[ային] ուժեր կազմակերպել: Մի զինվորական մարմին պետք էր ղեկավարեր այդ ուժերը: Յուրաքանչյուր կուսակցություն մի-մի ներկայացուցիչ պետք է ունենար զինվորական մարմնի մեջ: Հնչակյանների կողմից Սարգիս Արմաղանյանը, դաշնակների՝ Հովնան Միքայելյանը, իսկ ռամկավարների և Վեր[ակազմյալ] հնչակյանների կողմից սույն տողերը գրողը: Սկսեցինք քաղաքը և շրջանները կազմակերպել ու դիրքեր նշանակել հերթապահությամբ: Մին էլ լուր եկավ, որ Ամանոսի հայերը, որոնք թուրքերու կողմից ամեն կողմից պաշարված էին, անկախություն են հռչակել: Ինձ պաշտոն տրվեց գնալ Դյորթ Յոլ (Չոք Մարզվան) և աշխատել պաշարման շղթան կտրել ու Ամանոսի ճանապարհը բաց անել ու կապ հաստատել: Իսկույն ևեթ գնացի այնտեղ, ուր Մլեհը[98], որը տեղվոյն ինքնապաշտպանության գործն էր ղեկավարում: Սկսեցի բանակցել հետը կենտրոնի առաջադրանքը գլուխ հանելու համար, սակայն արդյունք չտվավ: Իր ուժերուն քիչ լինելը պատրվակ բռնելով՝ այդ տեսակ հանդուգն և վտանգավոր գործի ձեռնարկել: Այնպես որ հուսահատ և ձեռնունայն ստիպվեցի վերադառնալ: Երբ Մերսին հասա՝ թուրքերը Ադանա–Մերսին երկաթգիծը կտրել էին, և գնացք չէր աշխատում, որով մնացի այնտեղ և Ազգ[ային] միության հրավերով կազմակերպեցի Մերսինի հայ զին[վորական] ուժերը: Մերսին մնացի մինչև 1920 թ. հոկտեմբերը, երբ ֆրանսիական կառավարության հրամանով ցրվելու հարկին տակ գտնվեցի:

Այստեղ՝ Մերսինի Հայ ազգ[ային] որբանոցի արիների մարզանքը ու դաստիարակությունը իմ վրա դրին, ուր ամեն օր պարապում էի: Մի կողմից էլ Ադանայում արիներու համար «Գիտելիք հայ արիներու» անունով աշխատասիրությունս մաքուրի վրա արտագրել էի տալիս, որուն մի մասը գլուխ բերի,

---

[97] *Ծագում է սերբերեն* «чета» *եզրույթից, որը նշանակում է վաշտ: Թուրք՝* "çete" *նշանակել է ավազակախումբ, ջոկատ: Չեթե կամ չեթնիկ կոչվել են օտար տիրապետության դեմ պայքարող բալկանյան ժողովուրդներից կազմված ազատագրական խմբի մասնակիցները:*

[98] *Ասատուր Տամղաճյան (Մլեհ) – ազատագրական շարժման գործիչ, ՍԴՀԿ անդամ: Մասնակցել է 1895–1896 թթ. Զեյթունի հերոսամարտին:*

իսկ մյուս մասը կորավ: Ինչպես կորավ, ես ինքս էլ չգիտցա ու էլ դրանից հետո տրամադրությունս փախավ և այնպես մնաց[99]:

Մերսինի Հայ ազգ[ային] որբանոցի մի խումբ արիների լավ մարզելուց ու պատրաստելուվ հետո երդման հանդես մը սարքեցի և ի ներկայության տեղի հետաքրքիր հասարակության նախագահությամբ Հայ բարեգործական ընդ-հանուր միության Մերսինի Քելեկյան[100] որբանոցի տնօրեն, գերապատիվ Տ[եր] Մամբրե վարդապետի [Սիրունյան] (այժմ՝ արքեպիսկոպոս և առաջնորդ Եգիպտոսի հայոց): Այս առթիվ Վ. Մոստիջյան ստորագրությամբ մի հոդված տեսա Աղեքսանդրիայի «Արև» թերթում 1923 թ., երբ նորից Եգիպտոս եղա[101]:

ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 10, թ. 27–49: Ինքնագիր:

---

[99] *Այսինքն՝ աշխատանքը մնաց անավարտ:*
[100] *Որբանոցը հիմնվել է բարերար Տիգրան խան Քելեկյանի (1868–1951) կողմից:*
[101] *Տե՛ս «Արեւ» (Աղեքսանդրիա), 26. IX. 1920:*